ղը ժամանակին չի բացել իր լեզուն, վորից ուղարկել և թշնա-
մին, չորրորդն իրեն գումար և իր վիրապորված՝ ծառայու-
թյան կամ աշխատանքի գծով և այն: Դեպքերը կարելի յե-
անվերջ այլաձեւ, սակայն դա արդեն գեղարվեստական
գրականության վոլորտն և: Քաղաքական տեսակետից բո-
լոր այդ բազմազանությունը վեր և ածվում մի հայտարա-
րի կուսակցության այլպիսի անդամները դադարել են
ինտերնացիոնալիստներ, նշանակում և և լիարժեք կո-
մունիսաներ լինելուց, յեթե նրանք յերրեցն յեղել են
այլպիսին: Սահմանափակիվածությունը, լենինիզմի հիմնա-
կան խնդիրները մուացության տալը, բոլոժուական վերա-
սերումը—ահավատիկ այլպիսի մարդկանց բաժինը:

Ընկերներ, ուղում եմ ձեր ուշագրությունը հրավիրել
ինտերնացիոնալիզմի ևս մի կողմի վրա—խորհրդային հայ-
րենասիրության վրա: Խորհրդային հայրենասիրությունը
թեավորում և հոգեստն զինում և մեր ժողովրդին. նա
ծնում և բոլորովին հասարակ՝ առաջ անհկատելի յեղած
մարդկանց սխրագրություններ. նա մզում և տալիս մի-
լիոնների գործունեցությանը:

«...խորհրդային հայրենասիրությունը, — ասում
են ընկեր Մոլոտովը, — ածում և մասաների
մեջ, վորպես ԽՍՀՄ՝ խորհուրդներով միավորված
բոլոր ազգերի բանվորների ու գյուղացիների դաշնա-
քի հեղափոխական մեծ ուժի գիտակցում, վորպես
սոցիալիզմի կառուցման հաջողությունների ինտերնա-
ցիոնալ մեծ նշանակության գիտակցում՝ բոլոր յեր-
կըրների աշխատավորների համար»:

Խորհրդային հայրենասիրության այս ստալինյան ըմ-
բռնումը յես համարում եմ վորպես ինտերնացիոնալիզմի
բարձրագույն ձեւը:

Ահա Են ընկեր Ստալինն ինչ եր ասում 1931 թ. գետը-
վարի 4-ին սոցիալիստական արդյունաբերության աշխա-
տողների առաջին համամիութենական կոնֆերենցիայում
արտասանած իր ճառում՝ այն բանից հետո, յեր պարզեց

մեր ունեցած պարտավորությունները ԽՍՀՄ բանվորների
ու գյուղացիների հանդեպ.

«Բայց մենք ունենք նաև ուրիշ, ավելի լուրջ ու
ավելի կարեոր պարտավորություններ: Դա համաշ-
խարհային պրոլետարիատի հանդեպ յիշած պարտա-
վորություններն են: Նրանք համընկնում են առաջին
տեսակի պարտավորությունների հետ: Բայց մենք
նրանց ավելի բարձր ենք դասում: ԽՍՀՄ բանվոր
դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի
մի մասն և: Մենք հաղթեցինք վո՞չ միայն ԽՍՀՄ բան-
վոր դասակարգի չափերով, այլև չորրորդի համաշ-
խարհային բանվոր դասակարգի աջակցության: Առանց
այլպիսի աջակցության մեզ վաղուց կոցած կը կում
կլինենք պրոլետարիատի հարվածային բրի-
դագութիւնը և ասված: Բայց սա մեզ
վրա լրջագույն պարտավորություններ և զնում:
Ի սեր ինչի՞ յե աջակցում մեզ միջազգային
ոլլուկտարիատը, ինչո՞վ ենք մենք արժանի դար-
ձել այլպիսի աջակցության: Նրանով, վոր մենք
առաջինը նետիցինք մարտի՝ կապիտալիտմի դեմ,
մենք առաջինը հաստատեցինք բանվորական իշ-
խանություն, մենք առաջինն սկսեցինք սոցիալիզմ
կառուցել: Նրանով, վոր մենք մի գործ ենք անում,
վորը՝ հաջողության գեղքում՝ շուռ կտա ամբողջ աշ-
խարհը և կազմակարի ամբողջ բանվոր դասակարգը:
Իսկ ի՞նչ և պահանջվում հաջողության համար: Մեր
հետամնացության վերացում, շինարարության
բարձր, բոլշևիկյան տեմպերի զարգացում: Մենք
պետք ե այնպես առաջ շարժվենք, վոր համայն աշ-
խարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ՝ կարողա-
նու ասել: ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա,
իմ հարվածային բրիգադը, ահա նա, իմ բանվորական
իշխանությունը, ահա նա, իմ հայրենիքը, նրանք
լավ են անում իրենց գործը, մեր գործը, նրանց
աջակցենք կապիտալիտների դեմ և բորբքենք հա-

Մաշխարհային հեղափոխության դորձը: Արույոք մենք պիտի արգարացնե՞նք համաշխարհային բանվոր դասակարգի հույսերը, պիտի կատարե՞նք նրա հանդեպ մեր ունեցած պարտավորությունները: Այս՝, պետք է կատարենք, յեթե մենք չենք ուզում խպառ խայտառակլել:

Սրանք են մեր ներքին ու միջազգային պարտավորությունները»:

Ընկերնե՛ր, ինչպես տեսնում եք, յեթե խորհրդային հայրենականիրության մեջ զետեղենք բոլոր այն հանդամանքները, վորոնց մասին ընկեր Ստալինն ասում է, ապա այդպիսի խոկական հայրենասիրությունը միաժամանակ ել հանդիսանում է համաշխարհային պրոլետարիատի հանդեպ ունեցած մեր ինտերնացիոնալ խնդիրների կատարումը:

Այդպես ուրեմն, ընկերնե՛ր, թույլ տվե՛ք ինձ ամբողջ հոգով ցանկանալ, վորակեսզի լենինյան ույսոնական կազմակերպությունը—Մոսկվայի, մայրաքաղաքի կազմակերպությունը, վորակեսզի մեր լենինյան կուսակցական կազմակերպությունը միշտ ունենա կոմունիզմի այդ հիմնական դիմությունը միշտ ունենա կոմունիզմի այդ հիմնական դիմությունը միշտ ունենա կոմունիզմի այդ հիմնական դիմությունը միշտ ապրի մեր կոմունիստական կազմակերպության շարքերում: (Յերկարածու ծափահարություններ): Յեվ նա, ընկերներ, շատ մարդկանց կիրկի այն «ստորջրյա խութերից», վորոնց գեռես գոյություն ունեն մեր կյանքում և վորոնցից, գժրախտաբար, ճարապկորեն դեռ ոդտվում են չմերկացմած մեր թշնամիները:

Ընկերներ, հարկավոր եր շատ բան ասել ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների մասին: Սակայն ընկերություններին ասաց բոլոր անհրաժեշտ բաները: Զեկուցողը նույնպես իր զեկուցման զգալի հատվածը նվիրեց ընտրություններին: Յես ամբողջապես միանում եմ զբանց և կասեմ միայն յերկու խոսք: Յես վերջերս յեղա Կիրովի ույսոնի կուսակցական կոնֆերենցիայում, վորակել հանդես յեկողներն ընդգծում եյին, վոր իրենց ույսոնը անցյալ ընտրական կամպանիայում յերկրորդ տեղն է գրավել Մոսկվայում: Իհարկե, յես ցանկացա նրանց՝ վոչ միայն յերկրորդ տեղը

պահպանել, այլև առաջին տեղը ձեռք բերել: Իսկ մենք մեր հերթին պետք ե պայքարենք առաջին տեղի համար: Ինչպես տեսնում եք, ընկերնե՛ր, պայքարը խիստ լարված կլինի: Սակայն յես կարծում եմ, վոր մեր գրությունն անհուսալի չե և առաջին տեղը մերը պետք ե լինի: Ուրեմն, ընկերնե՛ր, յեկեք ընտրական կամպանիան այնպես անցկացնենք, վոր մեր ույսոնն առաջին տեղը գրավի Մոսկվայում:

«Рабочая Москва», 1938 թ. հունիսի 17:

ՅԵԼՈՒՅԹ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ԽՈՐՀԾՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՎՈՐԱԿԱՆ
ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՆԻՑԻՉՆԵՐԻ
ՀԱՄԱՔՍԱՂԱՔՍԻՑԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՒՄ 1937 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ

Ի՞նկերնե՞ր: Թույլ ավելի ի գեմո ձեր, ի գեմո խորհըրդային աշխատավորական ինտելիգենցիայի ներկայացուցիչների համապատաքային ժողովի, չնորհակալություն հայտնել ինինգրագի բոլոր ընտրողներին այս պատվի, այն վըստահության համար, վոր դուք ինձ ցույց եք տվել, իմ թեկնածությունը առաջարկելով ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի համար: (Բուռն ծափահարություններ):

Յես դժվար կացության մեջ եմ. առողիսորիայի տրամադրությունն այնքան բարձր ե, վոր դժվար ե այդ տրամադրությունը փոխել ե դարձնել կյանքի պրողան: Իսկ յես ավելի պրոցայի, քան թե սունդիայի մարդ եմ: (Ծիծաղ, ծափահարություններ):

Ահա յերկու շարաթ հետո Խորհրդային Միության քաղաքացիներն իրենց բյուլետենները գցելու յին քվեառութիւրի մէջ: Արտաքուստ գա բարդ արարողություն չե: Յես կուզենայի, վոր գուք, խորհրդային ինտելիգենցիայի ներկայացուցիչներդ, վորի առանձնահատկությունն արտահայտում ե նրանով, վոր նա խորհրդային ժողովրդի հետ մի ու արյուն ե, —վորպեսպի դուք առավելագույնն անեք այն բանի համար, վոր յուրաքանչյուր քվեարկող ունենա այն բարձր գիտակցությունը, վոր ինքը հսկայական քաղաքական դործ ե կատարում: Այդ շատ պատասխանատու, շատ մեծ աշխատանք ե:

Յես կուզենայի, վոր մարդիկ ներքուստ, որգանապես ըմբռնեյին այս ակտի քաղաքական կարևորությունը: Գե-

րագույն Խորհրդի ընտրությունները —խորհրդային գեմոնքատիայի ամենանշանակելի արտահայտություններից մեկն է: Զեղ հայտնի յե, վոր իր ժամանակ «դեմոկրատիա» բառը մեղանում հոլովվում եր առաջիրըն բոլոր հոլովներով և առանձնապես դրանում մեղավոր և մեր նախահեղափոխական ինտելիգենցիան, վորն իդեալ եր դարձրել արեմտայելու բոլովական պառլամենտարիզմը, տառացիորեն ֆետիչ դարձնելով այն: Մենք, կոմունիստներս, յերբեք դեմոկրատիան Փետիչ չենք դարձրել, մենք միշտ դեմոկրատիան դիտել ենք վորպես միջոց, այլ վոչ թե վորպես ինքնանպատակ: Մեղ համար դեմոկրատիան—կարենոր յեղանակներից մեկն ե, մեծ միջոցներից մեկն ե մասսաներին պետության կառավարմանը մասնակից դարձնելու համար, մասսաներին դաստիարակելու համար: Դեմոկրատիան հնարավորություն և տալիս մասսաներին համախմբելու, միացնելու և մղելու դեպի պայքար հանուն ընդհանուր նպատակների:

Սա ամեննեին չի թույլացնում այն փաստը, վոր խորհրդագային դեմոկրատիան աշխատավորների ամենաարժեքավոր նվաճումն ե, վորովհետեւ միայն խորհրդային դեմոկրատիան և ինկական դեմոկրատիա:

Միայն Խորհրդային Միության մեջ կա ինկական ժողովրդագիւմանություն, իրական դեմոկրատիա: Հիշեցնեք, թեկուզ, չին ուռասական պատմությունը և Նովգորոդի վեչեն: Արտաքուստ գա ամենապուտ դեմոկրատիա յեր ամրոջ ժողովուրդը հրավարակում վճռում եր արմտական հարցերը, և նրա վճռուները կյանքում գործադրվում եյին: Սլավյանոֆիլների մեջ փոքրաթիվ չեյին այն մարդեկը, վորոնք նայելով այդ արտաքին կողմին, ուռասական չին ժամանակը հայտարարում եյին ուռասական ժողովրդի վոսկեդար: Դեռևս Բելինսկին ու Զերնիչևսկին կծու կերպով ծաղըել են ուսպյանոֆիլների նմանորինակ հրավարանքները: Մենք, կոմունիստներս, հիանալի դիտենք, վոր նովգորոդի վեչեյում, նովգորոդի ժողովրդական ժողովում, ըստ եյության բոլոր կարևորագույն հարցերը փողն եր վճռում: Հարուստներն ունեյին փիդիկական ուժ, ունեյին «զոչաղ տղերք», վորոնք վեչե գալով, բղավում եյին ամենից բարձր, իսկ հաճախ ել բուռնցքներն եյին դործի դնում: Պատմապիրներին հայտնի

յե, վոր այդ «վոսկեղարում» հարցերը շատ հաճախ բռունքք-ներն ելին վճռում: Նովգորոդի վեչեն, իհարկե, իսկական ժողովրդականություն չեր: Դիմոկրատիայի ծաղման նմանորինակ ձևեր հանդիպում են նաև ուրիշ ժողովուրդների պատմության մեջ:

Անցնելով մեր ժամանակին, պետք ե ասել, վոր բուրժուական դեմոկրատիան, բուրժուա-դեմոկրատական յերկըների դեմոկրատիան ծառայում ե միայն վորպես թղենու տերե կապիտալի իշխանությունը վարագուրելու համար: Յես կարծում եմ, վոր այս ժողովում անհրաժեշտություն չկա, վոր յես հասուլ ապացույցներ բերեմ այդ բանը հաստելու համար: Յեթէ Նովգորոդի վեչենյում փողն եր գերի խաղում, ապա արդի բուրժուական դեմոկրատիայի մեջ կապիտալին ե վճռական դերը խաղում:

Բոլոր նրանց, ովքեր վինասում ե ձգտում են իսկական դեմոկրատական հասարակության, ովքեր ուղղում են այդ հասարակության մեջ ապրել, յես պետք ե ասեմ: իսկական դեմոկրատիա դոյլություն ունի Խորհրդային Միության մեջ: (Բուռն ծափահարություններ):

Անշուշտ, դուք ճիշտ կվարվեք, յեթե ինձ հարց տաք, — սակայն միթե դրանք դատարկ խոսքեր չեն, ինչո՞վ կարելի յե ապացուցել, վոր միայն մեզ մոտ կա իսկական դեմոկրատիա: Յես կաշխատեմ պատասխանել այդ հարցին:

Առաջինը, վոր բնորոշում ե մեր հասարակակարգի դեմոկրատականությունը, — այդ այն ե, վոր մեզ մոտ կապիտալիստներ չկան, վոր մեզ մոտ շահագործողական դասակարգեր չկան: Ահա ձեզ խորհրդային դեմոկրատիայի առաջին տարերիչ հատկությունը: Զե՞ վոր ամեն մեկի համար պարզ ե, վոր ինչովիսի «դեմոկրատիա» ել թեկուղ լինի, բայց այնտեղ, վորտեղ կողք կողքի ապրում են Ռոկֆելլերը և հասարակ բանվորը, — դեմոկրատիան դատարկ հնչյունը և միայն: Հասարակ բանվորին, — վորն ապրում է իր աշխատավուժի վաճառումով միայն և իր աշխատանքով կոպեկներ և վաստակում, — հսկայական տարածություն ե բաժանում միլիարդաբարոջից: այստեղ դեմոկրատիայի ինչպիսի ձև ել թեկուղ հորինես, բայց, վորչափով միլիարդառում ե միլիարդատեր, միլինույն ե, դեմոկրատիան

իդուր կանցնի: Հետեապես խորհրդային դեմոկրատիայի առաջին տարբերիչ գիծն այն ե, վոր նա աղատված ե կապիտալի իշխանությունից:

Հետո, մեր յերկրում դասակարգային հակասությունները բացակայում են: Յուրաքանչյուր կապիտալիստական յերկրում պետական վորեւ գործ վճռելու ժամանակ բաղիս վում են տարբեր կապիտալիստական խմբերի հակասական շահերը: Վերցնենք հետեւալ որինակը: — Մուսկվայում մենք այժմ քանդում ենք մի ամբողջ շարք տներ և կառուցում ենք նոր մագիստրալներ: Դա այնքան ել հետո չե անել կապիտալիստական յերկրում: Փարիզը, Լոնդոնը, Նյու-Յորքը շատ ու շատ տուժում են մասնավոր-կապիտալիստական շահերի պատճառով: Այդպիսի քաղաքի պլանավորման ժամանակ բարեհածեցե՞ք գնել հողի յուրաքանչյուր արշներ, բարեհածեցե՞ք չափազանց մեծ գումարներ վճարել հողատերին: Բուրժուական յերկրներում ամեն մի առաջադիմական քայլ ինչպես քաղաքային շինարարության մեջ, այնպես ել կյանքի մյուս բնագավառներում, արգելակվում ե կապիտալիստների շահագրգուված խմբերի կողմից: Աւսորի միանդամայն բնական ե, վոր կապիտալիստական յերկրում ամեն մի ձեռնարկում դեմ և առնում մասնավոր-կապիտալիստական, զծուծ շահերին: Ահա այդ տարբեր մեր սոցիալիստական յերկրում բացակայում ե: Վորչափով մեզ մոտ թշնամի դասակարգեր չկան, մեզանում բացակայում են նաև դասակարգային հակասությունները: Ամենելին պատահական չե, վոր Ստալինյան Սահմանադրությունը հըս-չակվել ե հատկապես այժմ, յերբ մեզ մոտ կառուցված ե սոցիալիստը և վերացված են դասակարգային հակասությունները:

Մեր յերկիրը տարբերվում ե նաև նրանով, վոր անցած 20 տարվա ընթացքում, — յես կարծում եմ, վոր չեմ պար-ծենում, այլ ուղղակի հաստատում եմ փաստը, — վոր այս 20 տարվա ընթացքում անչափ բարձրացել ե մեր մասսաների ինչպես քաղաքական, նույնպես ել կուլտուրական մակարդակը: Իմ կարծիքով այդ այլպես ե: (Ծափահարություններ): Մինչեւ տառացիորեն ամբողջ կապիտալիստական աշխարհում մենք տեսնում ենք ներկա մոմենտում արվեստ-

ների ու դիտության կամ լճացում, կամ զեզրաւացիա, մեզ
մռա, Խորհրդային Միության մեջ արվեստը և դիտությու-
նը բուռն բարդավաճման մեջ են: Մասսաների քաղաքական
ու կուլտուրական բարձր մակարդակը խորհրդացին դեմո-
կրատիայի առարկերիչ գլուխ է:

Խորհրդային գեմոկրատիայի չորրորդ տարրերիչ Հատ-
կությունը յես համարում եմ մեր ամբողջ ժողովրդի նպա-
տակների միասնությունը: Արինակի համար վերցնենք թե-
կուղ ամենից ավելի առաջազեմ կապիտալիստական մի պե-
տություն: Այլպիսի պետության տիրապետող դասակար-
պերը չունեն այնպիսի նպատակ, վորը միավորեր բոլոր
ազիսի մարդկանց, նպատակի, վորը վողեսրեր մարդկանց,
վորը մարդկանց բարձրացներ մինչեւ ամեն ինչ, նույնիսկ
իրենց կյանքը զոհելու պատրաստության: Մինչեւ անդամ
պատերազմի մոմենտին բուրժուական յերկրներում տիրա-
պետող դասակարդի հոկայական միջամակը մարդու-
րություն և անում, չարաշահություն և անում, ողուտ և
վորոնում:

Իսկ մեջ մոտ: Մեղ մոտ ամբողջ ժողովուրդն ունի
ընդհանուր նպատակ: Այդ նպատակն եւ պայքարը կոմու-
նիզմի կառուցման համար: (Բուռն ովացիա):

Կազ ժամանակ, յերբ ինտելիգենցիայի վարոշ մասը կո-
մունիզմը համարում եր գոկարինա, իսկ կոմունիզմի գա-
ղափարները պաշտպանող և կյանքում կիրառող մարդկանց
համարում եր Փանտազյունը: Ներկայումս, Խորհրդային
Միության 20-ամյա գոյությունից հետո, յուրաքանչյուր
խորհրդային քաղաքացու համար, ամբողջ խորհրդային ժո-
ղովրդի համար և նրա ինտելիգենցիայի համար կոմունիզ-
մը—այդ վո՛չ թե գոկարինա յե, այլ վորոշակի նպատակ և,
վորը միավորում ե մեղ բոլորիս: (Բուռն ծափահարություն-
ներ): Պատահել և, վոր նույնիսկ ծաղրի առարկա յեն
զարձրել այն մարդկանց, վորոնք հոչակել են կոմունիզմի
մեծ լոգունդը՝ յուրաքանչյուրից ըստ ընդունակություննե-
րի և յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների: Այո՛, 20
տարի սրանից առաջ այդ նպատակը վոմանց հեռու յեր
թվում: Յես առացի, վոր յես պրոդայի մարդ եմ, սակայն

այդ բարձր նպատակը պրոդայի մարդո՞ւն ել պոետ և
դարձնում: (Ծափահարություններ):

Այժմ մեզ մոտ հաստատված և Սահմանադրությունը,
վորը յուրաքանչյուրի համար ապահովում և աշխատանքի
իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք,
առաջնությած ծերության իրավունք: Այժմ մենք անմում
ենք սեփական աչքերով, չոչափում ենք սեփական ձեռքե-
րով, թե ինչպես տարեցտարի աճում և մեր բարորու-
թյունը: Այժմ մեր յերկրի ամեն մի քաղաքացի կոմունիս-
տական հասարակությունը համարում և միանդամայն հա-
սանելի: (Բուռն ծափահարություններ):

Ահա այս սկզբունքների վրա, այս հիմքի վրա ել զոր-
գանում և մեր խորհրդային գեմոկրատիան: Ահա թե ինչու
խորհրդային գեմոկրատիան իսկական գեմոկրատիա յե:
Սակայն, հասկանալի յե, ընկերութ', այժմ մեզնից և կախ-
ված խորհրդային գեմոկրատիայի հետագա կատարելազոր-
ծումը: Մենք պետք ե զրան դարձնենք այնքան ձկուն, վոր
յուրաքանչյուր մարդ, հասարակության յուրաքանչյուր ան-
դամ զգա իր որդանական կապն այս հասարակության հետ,
վոր պետությունը նրան ոզնի ծափակելու իր բոլոր անհա-
տական ընդունակությունները: Հասկանալի յե, կոմունիս-
տական հասարակության մեջ բառի ժամանակակից իմա-
տով պետական ապարատ չի լինի: Բայց կոմունիզմին հաս-
նելու համար մեր տրամադրության տակ մնացած պատմա-
կան ժամանակամիջոցում մեր պետությունը վիթխարի աշ-
խատանք պիտք և կատարի:

Խորհրդային ինտելիգենցիային վիճակված և հոկայա-
կան դեր խաղալ այդ ամբողջ աշխատանքում, պետական ձե-
քերը կատարելազործելու, մարդու վիրաբերմունքը գեղի
մարդը փոխակերպելու, մարդու հոգեբանությունը փոխա-
կերպելու դործում:

Չե՞ վոր մենք ինքներս չենք նկատում, վոր խորհրդա-
յին մարդն այժմ արգեն չի նմանվում կապիտալիստական
հասարակությանը պատկանող մարդուն: (Ծափահարու-
թյուններ): Ասենք թեկուզ նրանով, վոր կապիտալիստական
հասարակության մեջ մարդու հիմնական հոգու, միենույն
և նա ժլատ և, թե առատաձեռն, չար և, թե բարի, նրա

Հիմնական հոգսը փող կուտակելն է: Դա բնական է: Յեթե կապիտալիստական հասարակության մեջ մարդ վորոշ քանակությամբ փող չկուտակի, առաջին իսկ կատարած է, առաջին իսկ կատարողովը, նրա կյանքում պատահած անհաջողությունը նրան գուրս կցցի շարքից: Իսկ մեզ մոտ վերջին ոռութիւն ել այժմ վոչ վոք չի վախենում ծախսելուց: (Ծիծաղ, ծափահարություններ): Մեր վաղվա որն ապահոված է: (Ծափահարություններ):

Մի՞թե պարզ չէ, վոր խորհրդային գեմոկրատիան ամենակատարյալ գեմոկրատիան և աշխարհում: (Ծափահարություններ):

Խորհրդային կառավարությունը, կուսակցությունը, ընկեր Ստալինը ձգտում էն ամենալայն մասսաներին գրավելու սկսության ամսմիջական կառավարման գործի մեջ: Խորհրդային գեմոկրատիայի զարգացման խնդիրը կարող է քարհացնել միայն ամբողջ ժողովությը: Խորհրդային որդանների ընտրություններին մասնակցություն ցույց տալով աշխատավորական մասսաները գրանդիոզ խնդիր են, վերջնում իրենց ուսերին: Այդ խնդիրը նրանք կլուծեն, վորովհետեւ նրանք զեկավարվում են Մարքսի—Ենդելիսի—Ստալինի Ստալինի ուսմունքով: (Բուռն ծափահարություններ):

Սակայն իր մեծ խնդիրներն ավելի գյուրությամբ հաղթահրելու համար միավորված գեմոկրատական ժողովուրդը պետք է ազատ կերպով նայի զետի առաջ: Ուստի բոլոր հերձածողների հետ, վորոնք զավարություններ են սարքում ժողովրդի թիկունքում, մենք զատատան կտեսնենք այնպես, ինչպես ընդունված է գտատատան տեսնել թշնամութեատ:

Ընկերներ, այսուղ շատ խոսեցին այն մասին, վոր մենք յերջանիկ ժամանակ ենք ապրում: Յես ել այդպես եմ մտածում և միայն կուզեյի հասակ պակասեցնել եստես՝ մի 20 տարով (ծիծաղ, ծափահարություններ), բայց քանի վոր յես որյեկտիվ հանդամանքները հաշվի տանող մարդ եմ, ապա ուրիմն յես հաշվում եմ տարիքիս հետ: (Ծիծաղ, ծափահարություններ):

Յեզ, ինձ թվում ե, հատկապես յերջանիկ ժամանակ և ապրում մեր յերիտասարդությունը: Հին ժամանակ մենք

յնտելիդենցիային բնակչության մանր-բուրժուական խավեցին եյնք վերապրում: Բուրժուական հասարակության մեջ յնտելիդենցիայի վերին մասը սերտածել եր շահագործողական դասակարգերի հետ: Իսկ մեզանում շարքային ինժեների աշխատավարձի միջն տարբերությունը շատ մեծ չէ: Բայց բանը միայն այդ չէ: Մեր ինտելիդենցիան ամենասերտ կերպով կապված է բանության դասակարգի հետ, կոլոնտեսային գյուղացիության հետ: Մեր ինժեներները, գրողները, գերասանները, նկարիչները, բանաստեղծները, մանկավարժները առաջ են քաշվում ինտելիդենցիայի շարքերը՝ նայած իրենց ընդունակություններին: Միջնակարգ կրթությունը, յոթինամյակը մեզանում պարտագիր են բոլորի համար, իսկ յոթինամյակն ավարտելուց հետո ամեն մեկի համար բաց են բոլոր ճանապարհները: Մեր ինտելիդենցիայի շարքերն են լցվում ժողովրդի միջից յելած առավել ակտիվ, առավել ընդունակ, առավել վորակյալ մարդեկ:

Մեր արդի ինտելիդենցիան խորհրդային ինտելիդենցիայի առաջին սերունդն է: Դա խորհրդային ժողովրդի հետ մի միս ու արյուն է, գա մեր ժողովրդի անկապտելի մասն է: Խորհրդային ինտելիդենցիայի ճակատին նայելով կարելի յեմինչեւ իսկ ճանաչել և՛ բանվորի և՛ դյուզացու բնորոշ գծերը: (Ծափահարություններ): Մենք մեր ինտելիդենցիային նույնպես կսիրենք, ինչպես սիրում ենք Կարմիր բանակը (բուռն ուլացիա), իսկ մենք շատ ենք սիրում Կարմիր բանակը: (Ծափահարություններ):

Այսուղ առացին, վոր միայն այժմ կարելի յէ ծալալել ստեղծագործական ուժերը: Այդ ձիշտ է: Միայն խորհրդային հասարակակարգն է ինտելիդենցիային հնարավորթյուն տալիս ծավալելու իր ստեղծագործական ուժերը, ընդունակությունները, տաղանդները: Յել այդ—սոցիալիստական պետության պայմաններում: Իսկ կոմունիստական հասարակության մեջ մենք կծավալենք այնպիսի ուժեր, վոր մարդու շունչը մի՛ պահ կանգ է առնում, յերբ մտածում է այդ մասին: (Ծափահարություններ):

Կրերեմ ամենասովորական արտադրական մի որինակ:

Ահա Մոսկվայում մետրո յեն շինում: Մետրո յեն շինում

նաև արտասահմանում։ Ասացե՛ք մէի՞թե մէտրոյի կայարաններ նախագծող մէր ճարտարապետը նույնպիսի դրության մէջ և գտնվում, ինչպես, յենթալրենք, Փարփղի ճարտարապետը։ ԶԵ՞ վոր Փարփղում ել ստեղծագործությունը ճարտարապետին մղում և զեղի այն, վոր հասարակությանը գեղեցկություն, շքեղություն տա, չէ՞ վոր նա ել կուզեր ստեղծել չեղյովրդեղեցիկ, սքանչելի արտադրանք։ Այդ բնական ե։ Յես կարծում եմ, վոր ամեն մի ճարտարապետ ձգտում և դրան։ Իսկ նա կարո՞ղ ե արդյոք բուրժուական հասարակության մէջ ազատություն տալ իր ստեղծագործական թափին։ Գո՛չ, չի կարող։ Ինչո՞ւ։ Հենց այն պատճառով, վոր այնտեղ մետրոն կապիտալիստն է շինում։ Իսկ կապիտալիստը մետրոն շինում և վոչ շեղյովր ստեղծելու համար, նա կապիտալիստական ճեռնարկությունն է շինում շահույթ ստանալու համար։ Ասենք ինքը կապիտալիստն ել կաշկանդված և փողով։ չէ՞ վոր յեթե կառուցումը նրան թանդ նստի, —վնասներ կտացին։

Իսկ մեղանո՞ւմ։ Մեղանում ամեն ինչ սոցիալիստական պետությունն է կառուցում։ Աշխարհում չկա մի կապիտալիստ, վորն այնպիս հարուստ լինի, ինչպիս խորհրդային սոցիալիստական պետությունը։ (Ծափահարություններ)։ Յերբ մեղանում առաջադրանք են՝ տալիս ճարտարապետին, նրան առում են, վոր հարկավոր և այնպիսի չենք կառուցել, վորը համապատասխանի ժողովրդի շահերին, նրա հարմարություններին և գեղարվեստական ճաշակներին։

Բուրժուական հասարակության մէջ և սոցիալիստական հասարակության մէջ ինտելիգենցիայի դրության տարրերությունն առաջ և զալիս այն բանի հետևանքով, վոր այնտեղ իշխանության զլութ են կանգնած կապիտալիստները, իսկ այստեղ—աշխատավորները։ Մեր ժաղավորդն առում և ճարտարապետին—շինիր ինձ համար մետրո, սակայն վորովէնեան այդ մետրոյից մասսաներն են ոգտելու, ապա մի՛ մտածիր շահույթի մասին, այլ մտածի՛ր այն մասին, վոր մարդ այդ մետրոյով աշխատանքի յե գնալու և վերադառնալու, մտածի՛ր այն մասին, վոր մարդ չհողնի մետրոյով յերթենելու ժամանակ։ Ահա ճեզ ինտելիգենցիայի դրության տարբերությունը՝ կապիտալիստական աշխարհում և

մեզ մոտ։ Իմ բերած այս որինակը կարելի յե տարածել մտավոր աշխատանքի մարդկանց տառացիորեն բոլոր ստեղծագործական արտահայտումների վրա։

Յես ավելին կասեմ։ Կապիտալիստական աշխարհում ամեն իր ստեղծում են, յենելով շահույթ ստանալու ցանկությունից։ Զարմանալի չե, վոր Ամերիկայում, վորը հրոշակված ե իր շոայլողությամբ, ըստ եյության ամեն իր շինուած և ստանդարտային, կարգով, վորպեսզի դրանք ավելի եժան արժենան։ Այսպես կոչված «միջին մարդը» ողտղում և այդպիսի իրերից։ Կյանքի ամբողջ ստհմանումն այնտեղ յենում և կապիտալիստից, վորի համար կարեօր և մի բան—վաստակը, վաստակը, և վաստակը։

Իսկ մեղանում բոլոր որյեկտները—աները, կամուրջները, կայարանները, լայն սպառման առարկաները—մենք կապարատատենք յենելով նրանց նպատակահարմարությունից, ողտակար ու գեղեցիկ լինելուց։

Կարելի յե համարձակ ասել, վոր մեր ապագա կյանքի գեղեցկությունը, նրա հարմարությունը և հաճելիությունը շատ բանում մեղանից և կախված։ Այլանդակ տները, —իսկ այդպիսի տներ մեզ մոտ շատ են կառուցել, —հախագծել են վոչ թե բանիորները, այլ ճարտարապետները։ ԶԵ՞ վոր մեղանում պետությունը՝ բոլոր հարցերի լուծման ժամանակ հենվում և մատնագետների կարծիքի վրա։

Յես կարծում եմ, վոր վորքան ավելի առաջ գնանք և վորքան ավելի կատարյալ լինի մեր կյանքը, վորքան ավելի բարձր լինի տեխնիկան, վորքան մենք ավելի բարձրացնենք ժողովրդի գեղարվեստական պահանջները, —այնքան ավելի մեծ կլինի մատնագետների ազդեցությունը Առըհրդային Միության ամբողջ սոցիալիստական շինարարության վրա։

Ահա թէ, ընկերներ, ինչ ե նշանակում խորհրդային հասարակակարգ, ահա թէ ինչն ե ինտելիգենցիայի գերը այս խորհրդային հասարակակարգում։ Ինչպես տեսնում եք, մի դեր, վորը, թերեւ, ավելի մեծ ե, քան դուք յենթադրում եք։ Դա շատ պատվավոր զեր ե։ Մենք ասում ենք, վոր մեր յերկիրն աշխարհում առաջինը կլինի արվեստի ու գիտության բնագավառում։ Յես նույնպես այդպիս եմ կարծում։ Սակայն դրա համար հարկավոր և, աշխատել, կատարելա-

զործել մեր կյանքը և անձամբ կատարելագործվել: Յեկ յեթե դուք ուզում եք, վոր յերկիրը շուտ քայլի դեպի առաջ, — ամբողջ թափով ծավալեցէ՞ք ձեր ստեղծագործական ուժերը: (Յերկարանի ծափահարություններ): Յես կարող եմ ձեզ յերաշխավորել, վոր ձեր ստեղծագործական ուժերի զարգացումը բացառիկ հարուստ բովանդակությամբ կլցնի ձեզանից յուրաքանչյուրի անհատական կյանքը: (Ծափահարություններ):

Ընկերներ, դեկտեմբերի 12-ին բոլորս քվեարկելու յենք կոմունիստական կուսակցության ոգտին, ժողովրդական ակնկալությունների արտահայտիչ՝ ընկեր Ստալինի ոգտին: (Բուռն ծափահարություններ, վորոնի վերածում են ովացիայի, բացականչություններ՝ «ուռա»):

Հանո՞ւն խորհրդային ինտելիգենցիայի, հանո՞ւն խորհրդագային ինտելիգենցիայի ստեղծագործության: (Նորից փորորկալի ծափահարություններ, նորից «ուռա» բացականչություններ):

ՀԱՅ «ՍԿՐԻՊՏ» ԳՐԱԴԱՐԱՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄՈՐԱԾԻ ՔԱՂԱՔԱՅԻ ՅԵՎ
ԳՅՈՒՎԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՇԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
1938 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ

I. ՄԱՐՔՍԻՑՄ-ԼԵՆԻՆԻՑՄԻ ԹԵՌԻԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ընկերներ, մեզ մոտ այժմ շատ են խոսում մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական թեորիան ուսումնասիրելու մասին, բոլշևիկյան կուսակցության պատմությունն ուսումնասիրելու մասին: Գլխավորն այստեղ այն է, վոր մարդ յուսիրելու այդ թեորիայի բուն եյությունը, սովորի ոգտվել բացնից գործնականում և ըմբռնի մեր կուսակցության հեղափոխական պայքարի վորձը:

Կարդալով «Համել(բ)կ պատմության համառոտ դասընթացը», յես հիացա նրա բովանդակության խորությունից, մտքի հստակությունից և շարդրանքի պարզությունից, բայց այժմ բառացի հիշել չեմ կարող, մոռացել եմ: Սակայն բանն այստեղ վոչ միայն հիշելն է, այլ գլխավորը հասկանալն է:

Մարքսիստական-լենինյան թեորիան հավատի սիմվոլ չե, գոպմանների ժողովածու չե, այլ զործողության դեկաչ, գոպմանների ժողովածու չե: Յերբ վոճանք խոսում են մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու մասին, ապա ասում են «խորացված աշխատանք», «առանձնապես խորացված աշխատանք» և այլն: Սակայն պետք է հասկանալ, վոր մարքսիզմ-լենինիզմի մեջ գլխավորը—այդ վոչ թե տառն է, այլ նրա եյությունն է, հեղափոխական վոգին է:

Ի՞նչ է նշանակում, յերբ ասում են «ընդգրկել մարքսիզմ-լենինիզմն ամբողջովին»: Ի՞նչպես հասկանալ այդ: Արդյոք այդ հասկանալ վորպես մարքսիզմ-լենինիզմի ամբողջությանը բառացի անդիք անե՞լը՝ արդեն բողջ գերիմաստությունը բառացի անդիք անե՞լը՝ պատրաստի յեղակացությունների և Փորձութաների ձեռվ: Թե՞ այդ հասկանալ վորպես մարքսիզմ-լենինիզմի եյությա-

Նը տիրապետելը և այդ թեորիան կյանքում, իր հասարակական-քաղաքական և անձնական կյանքում վորպես գործողության դեկալարություն կիրառելու կարողություն։ Յերկրորդն ավելի ճիշտ, ավելի ուղիղ, ավելի կարեռ կլինի, նա Հիմնականն է մարքսիզմ-լենինիզմի մեջ։ Յեկյեր ասում են «տիրապետել մարքսիզմ-լենինիզմին», ապա այդ նշանակում ե սովորել այդ տեսնել դինամիկայում։

Մարքսիզմ-լենինիզմը ավելի կամ պակաս չափով սերտել կարող է ամեն վոք, իսկ յուրացնել նրա եյուժյունը և սովորել այն կիրառել՝ սա ավելի դժվար է։ Մենք դիտենք բազմաթիվ հին բանվորներ, վորոնք մասնակցել են քաղաքական պայքարին։ Մի՞թե նրանք մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրել են այնքան, վորքան դուք։ Զե՞ վոր նրանք «Համեմ(բ)կ սրատության համառոտ դասընթաց» չեն ունեցել։ Շատ քիչ ե նրանց վիճակիցել սխառեմատիկորեն ուսումնասիրել այդ թեորիան։ Թերևս, մի տաս հեղափոխական գրքեր կարդացել են—և ընդամենն այդ։ Իսկ ահավասիկ իրենց սլրակտիկայում նրանք բավականին ճիշտ են կիրառել մարքսիզմ-լենինիզմը։ Այդ թեորիայի դրոշի ներքո դնացել են և այժմ զնում են միիրոնավոր մարդիկ։ Յեկ շատ բանվորներ ճիշտ են մոտեցել հասարակական յերեկույթին, քաղաքական կյանքին, նրանք ճիշտ են ըմբռնել մարքսիստական-լենինյան զիծը՝ այս կամ այն հարցի լուծման ժամանակ։ Դրա պատճառն այն է, վոր նրանք հասկացել են, ըմբռնել են մարքսիստական-լենինյան թեորիայի հեղափոխական եյությունը։

Մարքսիզմ-լենինիզմը ուսումնասիրել հարկավոր է վո՞չ սոսկ ուսումնասիրելու համար, վո՞չ ձեւի համար։ Մարքսիզմ-լենինիզմը մենք ուսումնասիրում ենք վո՞չ թե նրա համար, վոր այն իմանանք ձեւականորեն, ինչպես առաջներում հավատի ուսմունք եյին ուսումնասիրում։ Մարքսիզմ-լենինիզմը մենք ուսումնասիրում ենք վորպես մեթոդ, վորպես գործիք, վորի ողությամբ մենք ճիշտ վորոշում ենք մեր քաղաքական, հասարակական և անձնական վարքակիծը։ Մենք դանում ենք, վոր դա մարդու ամենահզոր դենքն է իր գործնական կյանքում։

Այժմ մեր առջև հարց է ծառանում, թե ի՞նչպես սո-

վորենք ավելի ճիշտ կիրառել մարքսիզմ-լենինիզմը պրակտիկայում։ Ամենից առաջ հարկավոր է, թեկուղ ընդհանուր գծերով, իմանալ մարքսիզմ-լենինիզմի թեորիական հիմունքները, թեկուղ ընդհանուր գծերով իմանալ կոմունիստական կուսակցության պատմությունը։ Կուսակցության պատմությունը ուսումնասիրելիս պետք է նայել, թե այս-ինչ և այս-ինչ հանդամանքներում ի՞նչպես են բոլշևիկները լուծել այս-ինչ գործնական հարցը։ Ինչո՞ւ նրանք այդ հարցն այսպես են լուծել և վոչ թե այլ կերպ, ինչի՞ց են նրանք յելել։ Ինչո՞ւ, որինակ, մենք բոյկոտի յենթարկեցինք բուլղարիան դուման, ինչի՞ց եյինք մենք յելնում։ Ի՞նչ պատճառով, հետո, քաղաքական ավելի պակաս նպաստավոր հանդամանքներում, մենք ընտրեցինք Ա, ԱՌ և ԱՌ Պետական գումարի համար։ Ինչո՞ւ։ Բոլոր այդպիսի հարցերի վերլուծման ժամանակ (իսկ այդպիսի հարցեր պատճության մեջ շատ են յեղել, վորովհետեւ պայքար, շատ եյեղել) գտածություն ե ասես վորպես որինակ մարքսիզմ-լենինիզմի մեթոդի կիրառման, մյուս հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման՝ այլ, քաղաքական նոր իրադրության մեջ, ժամանակակից պայմաններում ծագող հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման։

Հասկանալի յե, վոր ընդունին պետք է ուշադրության առնել տեղի ունեցած բոլոր փոփոխությունները, բոլոր նոր պայմանները։ Ուստի մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրելիս ամենազլավորն ե—իրեն ստուգել այն հարցերի լուծմանը ցույց տրվող մոտեցման դորժում, վորոնք այսուլ, այս բարեկին հերթի յեն դրված կյանքի զանազան բնադրավառներում։ Վերցնենք վորեե կենցաղային որինակ։ Ահա ուսուցչուհին բաժանվեց ամուսնուց։ Մարքսիստական տեսակետից ի՞նչպես պետք է լինի մարդկանց վարքագիծն այս զեպօւմ։ Ի՞նչպես վարվել։ Զե՞ վոր այդպիսի հարցի նկատմամբ ել պետք է ճիշտ մոտեցում զտնել, այն քննելցի կիրառմանը ամուսնուց։ Ամենահասարակ մոտեցումը (և գտածությունը ավելի կամ պակաս չափով, գոյնեւ ճիշտ վորոշում ենք մեր քաղաքական, հասարակական և անձնական վարքագիծը։ Մենք դանում ենք, վոր դա մարդու ամենահզոր դենքն է իր գործնական կյանքում։

են, զյուղնում բամբասում են, ուսուցչուհու հեղինակությունը խախտվել և, —անհրաժեշտ ե այդ փաստի խելացի բացարձյումը: Տեսնո՞ւմ եք, թե ի՞նչպես յերբեմն նույն բակ դուռ կենցաղային հարցը կարող ե դառնալ հասարակական-քաղաքական հարց: Կյանքում յուրաքանչյուր որ տեղի յեն ունենում անվերջ քանակությամբ կենցաղային դանաղան գեղագիր: Ճիշտ լուծումը գտնել այդ գեղագիրում և ճիշտ հասականալ, թե ի՞նչպես վերաբերվել դրանց՝ մարքսիզմի տեսակետից, —ահա այստեղ և, վոր մարքսիստն ստուդիում ե:

Չե՞ վոր մարքսիզմ-լենինիզմը—դա այն բանալին և, վորը հնարավորություն ե տալիս լուծելու այս կամ այն հարցը: Դա միայն հնարավորություն ե տալիս և վոչ թե լուծում և, հնարավորություն ե տալիս ավելի ճիշտ մոտենալու հարցերի լուծմանը: Սակայն դա պատրաստի ունեալու չե կյանքի բոլոր գեղագիրի համար: Առորյա հարցերի լուծման, դրանց լուծման նկատմամբ ցույց տրվող մոտեցման գործում ել զգացվում ե, թե վորն ե իսկական բոլեվիկը և վորը տիրացուն, տառակերը:

Լինում են մարդիկ, վորոնք իրոք տիրապետում են մարքսիզմ-լենինիզմին և կարողանում են այդ թեորիան կիրառել գործնական հարցերի լուծման ժամանակ: Բայց լինում են մարդիկ, վորոնք լեցուն են զիտական տեքստերով, ինչպես կարտոֆիլով պարկը, բայց գործնականորեն այդ գիտելիքները կիրառել չեն կարողանում: Այդպիսի մարդիկ ամեն ինչ կարող են անզիր պատմել, նաև դասախոսություն կարգան: Իսկ յեթե նրան ասես, վոր ձեր գլորոցում պատճել ե այսպիսի մի կաղուս—ա՛յ, որինակ, հայրը ծեծել ե իր վորդուն, վորը սովորում ե այդ դպրոցում—և հարց տաս, թե հասարակական տեսակետից ի՞նչպես ճիշտ մոտենալ այդ կոնկրետ գեղագիրն, ապա այդպիսի մարդիկ կշփոթվեն՝ յերեք ծառի արանքին կմոլորվեն: Իսկ յեթե նրանք վորեւ առաջարկություն մատցնեն ել, ապա դա ուղղութունիստական կլինի, դա ամենեին չի համապատասխանի մարքսիզմ-լենինիզմի վորուն, թեպետև նրանք բերեն մի կույտ ցիտատներ: Ոպորտունիզմը միշտ մարքսիզմ-լենինիզմն ուղղակի ժխտելով չի արտահայտվում միայն: Յեր-

բեմն այդ յերեան ե գալիս տառակերության մեջ, այդ թեորիային դոգմատիկ վերաբերմունք ցույց տալու մեջ:

Ահա զործնական հարցերը մարքսիզմ-լենինիզմի եյության խկական յուրացման հիման վրա լուծելն ել հենց բոլցելիզմի դպրոցն ե:

Տեքստի ուսումնասիրումը—այդ միայն տեքստի ուսումնասիրումն ե: Յեվ ինչպես վոր դպրոցը յերեխանների համար դեռ ամբողջ բուն կյանքը չե, այլ միայն դպրոց ե, այնպես ել մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրումն ուսումնական հաստատություններում, զանազան խմբակներում և սեմինարներում, նմանապես ինքնուրույն ուսումնասիրումը և այն—այս ամենը միայն ուսումնասիրումն ե: Մարդ այդ ուսումնասիրման գեղագում միայն գրքով ե խմանում մարքսիզմ-լենինիզմը: Իսկ ահա յերբ նա ընկղմի քաղաքական կյանքի մեջ, յերբ նա կիրառի այդ մեթոդը, և կիրառի գիտակցորեն, այդ ժամանակ ուրիշ բան ե: Կյանքի հարցերի գործնական լուծման ժամանակ, այն հարցերի, վորոնց առիթ ե լինում հանդիպել ամեն որ, այլտեղ ել հենց արտահայտվում ե մարքսիզմ-լենինիզմը, այդտեղ ել հենց ստացվում ե մարքսիզմ-լենինիզմի գլխավոր դպրոցը, այլտեղ ել հենց յերեան ե դպալիս իսկական մարքսիստ-լենինյանը:

Գլխավոր դպրոցն այն չե, վոր սեմինարում գրալիցիկը, կամ լեկցիա լսեցիր: Այդ միայն սժանդակ ե:

Գլխավոր դպրոցն ստացվում ե այն ժամանակ, յերբ վիճեք մարդկանց հետ, յերբ խոսեք ժողովրդի հետ, յերբ վորոշում ընդունեք ծույլ աշակերտի մասին: Իսկ ի՞նչ վորոշում ընդունել. յերկո՞ւ թե յերեք դնել, վոնդել ուսումնական հաստատությունից թե, ընդհակառակը, —զիջողաբար վերաբերվել:

Ահա՝ այդպիսի հարցերի լուծման ժամանակ ել հենց կլինի մարքսիզմ-լենինիզմի ամենաղլխավոր դպրոցը:

Ինչպես ինժեներ-տեխնոլոգի համար՝ գործարանում աշխատելը՝ նրա տեխնոլոգիական զիտելիքների գործնական կիրառումը և վորձի կուտակումն ե հանդիսանում, ինչպես վոր ուսուցչի համար՝ դպրոցում անմիջականորեն աշխատելը նրա մանկավարժական զիտելիքների գործնական

կիրառումն և հանդիսանում, այնպես ել մարքսիզմ-լենինիզմ-ը կենդանի, որպահական միասնությունն եւ թեորիայի ու պրակտիկայի:

Յեվ այսպես, դուք այժմ հասկացաք, թե յես ամբողջ ժամանակ ինչի մասին եմ խոսում: Յես ուզում եմ պարզ դարձնել այն միտքը, վոր մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու համար բոլորովին բավական չե այդ թեորիայի Փորձությաներն ու յեղակացություններն անգիր անելը, դրա համար բավական չե նաև նրա եյությունը յուրացնելը: Մարքսիզմ-լենինիզմին իրոք տիրապետելու համար պետք եւ դեռ սովորել դործնական հարցերը լուծելիս ուղարկել այդ թեորիայից, իսկ յեթե այնելի առաջ գնանք, — ասու նուև կարողանալ այդ թեորիան հարստացնել կուտակված փորձով, ընդհանրացնել փորձը, այսինքն՝ կարողանալ այն զարգացնել և առաջ մղել: Ահա սա ել հենց ամենադժվարն է:

«ՀամԿ(բ)կ պատմության համառոտ դասընթացը» արտաքուստ զրված եւ շատ հանրամատչելի ձեռվ, սակայն նա շատ մեծ աշխատանք եւ պահանջում ընթեցողից: Այնտեղ տրված են մարքսիզմ-լենինիզմի բոլոր հիմունքներն ամենասեղմ ձեռվ: Կարդալիս հարկավոր եւ մտածել ամեն մի տողի վրա: Վոչ թե անողիր անել, այլ լավ մտածել-խորածուխ մենել: Խոսքն այն մասին ե, վոր մարդ սովորի մարքսիզմ-լենինիզմը գործնականում կիրառել, և այդ հարկավոր եւ սովորել: Իսկ ի՞նչպիս սովորել: Սովորել պատմական որինակներով, և այն ել փոխադարձ շփման և կարծիքների փոխանակման միջոցով:

Ահա այստեղ առացին, վոր լույլ կլիներ խմբակներ ունենալ: Յես լիովին հասկանում եմ այդ ձգտումը: Դա վորոշ չափով ճիշտ ե, վոր խմբակը համենայն դեպս կարծիքների փոխանակման հսարավորություն եւ տալիս: Բայց ո՞վ ասաց ձեղ, թե այժմ դուք չեք կարող խմբակներ հավաքել: Վո՞րտեղից վերցրիք այդ: Կարդացե՞ք կուտակցության կենտրոնի 1938 թ. նոյեմբերի 14-ի վորոշումը: Նրա մեջ դատապարտվում եւ խմբակը վորպես մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության հարկադիր սիստեմ, վորը առաջ

քարձրացվել-դարձվել եր վորպես մեր կաղըերին բոլշևիզմ սովորեցնելու հիմնական ձեռ, և վորպես քանակի հետեւից ընկնելու գործնական արտահայտություն՝ ի վնաս պրոպագանդայի վորպակի: Այստեղ ընկերն ասաց, վոր նրանց մոտ յոթ հոգի ուսուցիչներ ինքնուրույն պարապում են: Ո՞վ է ձեղ խանդարում ասել. «Մի շաբաթ հետո յես զեկուցում կանեմ այս-ինչ հարցի վերաբերյալ. ովքեր ուզում են համարքվել և քննարկել, թող դան»: Մի՞թե վորեւ մեկը խանդարում է:

Կյանքի ամեն մի յերեսույթին պետք եւ մոտենալ կոնցերետ կերպով, յեթե գու մարքսիստ ես: Յեվ, հասկանալի յե, իրար միջեւ այլպես քննարկելու դեպքում կարելի յե ավելի լավ ըմբռնել հարցը: Յերբ դուք կարդացել եք, դուք միայն մի կողմն եք վերցրել, յերեք կողմն եք վերցրել, իսկ չորրորդը չեք վերցրել: Վերջապես, վերցրել եք բոլոր չորս կողմերը: Մինչդեռ պարզվեց, վոր այդ վոչ թե քառակուսի յե, այլ խորանարդ ե, վորն ունի վեց կողմ: Այսպես վոր ուրիշների հետ քննարկելիս միտքը հղվում եւ հարստանում:

Դուք ասում եք, վոր գիսկուսիաներ են հարկավոր: Մակայն ո՞վ է խանդարում ձեղ: Ուզեք, կհավաքեք հինգտաս հոգի: Զե՞ վոր հինգ հոգին կարող են հիմնավորապես վիճարանել իրար հետ: Ո՞վ է ձեղ խանդարում: Իսկ յեթե դուք դեռ զեկուցումներ ել գրեք, ապա յես պետք եւ ուղղակի ասեմ, — հինգ անգամ ավելի ուսումնասիրած կինեք հարցը, քան թե դուք լեկցիա լսեք: Զե՞ վոր զեկուցում գրելու համար հարկավոր եւ յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր միտքը լավ մտածել, կըուցում: Զեկուցում գրելու համար հարկավոր եւ այստեղ նայել աղյուսը լուսական կարգի լեկցիայի լսեք: Լեկցիաներին՝ յուրացնելը շատ բանից եւ կախված նայած ինչպիսի գասախոս եւ ինչպիսի տրամադրություն ունեք դուք: Գուցե, լեկցիայի ժամանակ մի-քիչ խոսեցիք հարեւանիդ հետ: Դուք ինքներդ գիտեք, վոր լեկցիայի մեջ հաճախ յերեք քառորդը ջուր ե, իսկ մեկ քառորդը՝ շահեկան տեղեկություններ: (Ծիծաղ): Մենք, դժբախտաբար, չենք կա-

րողանում, ինչպես հարկն ե, ջուրը մղել: Ճիշտ ե, այն հարկավոր ե մղել: Բայց այսուամենայիլ լիովին չես կարող մղել այն: Զկարծեք, թե յես դեմ եմ լեկցիաներին: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր լեկցիաներին ուսուցման շատ կարևոր տեսակն են: Յես միայն ձեզ մղում եմ ինքնուրույն աշխատանքի, իսկ այդ աշխատանքը ձեզ կսփալի հաճախել լեկցիաները և ուշադրությամբ լսել դրանք:

Ի՞նչպես վերաբերվել խմբակային աշխատանքին: Գիտե՞ք ինչ, խմբակը ինչ-վոր սահմանափակվածության նըրբերանդ ունի: Բուն «խմբակ» անունը սահմանափակվածության նշան է: Արդյոք, դրանով իսկ վերացվում է կոլեկտիվ քննարկումը:—Վո՞չ, չի վերացվում և չի արատավորվում: Կոլեկտիվ քննարկումը պետք է զուգարդվի ինքնուրույն ուսումնասիրության հետ, վորը հիմնական մեթոդ է հանդիսանում: Տանը պատրաստի՞ր, խմբակում, ժողովում զեկուցում արա՛, իսկ զեկուցման շուրջը վիճարանություններ ծավալիր: Վո՞չ թե արհետուական վիճարանություններ ծավալիր, այլ այնպես արա, վոր ամեն մեկն իր իսկական կարծիքն արտահայտի դրված հարցի վերաբերյալ, վոր չվախենան ասել այն, ինչ վոր մտածում են: Յեթե այդ զեկուցման մեջ լինի զեթ մի կաթիլ սեփական կարծիք, յես չեմ կասկածում, վոր ձեզ մոտ տաք վիճարանություններ կլինեն: Այդ վիճարանությունները, թեկուղ Պուշկինի մասին, մարքսիզմ-լենինիզմի հիմնալի դասը կլինեին:

Յերբ խոսում են մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության մասին, ապա հաճախ մտածում են, թե իբր միմիայն մարքսիստական դրվեր պետք է կարդալ-Մարքս, Ենդելս, Լենին, Ստալին կարդալ: Իրոք—վոչ միայն նրանք: Սակայն խնդիրն այն է, վոր ամեն մի դիրք մարդ կարդա մարքսիստորեն, լենինարար, ստալինարար: Ասենք, կարդում են Զերնիչեսկին, առ կարելի յե դանաղան կերպ կարդալ: Վաթոսունական-յոթանառական թվականների առաջավոր ընթերցողը նրան կարդում եր իր ձեռվ, այն ժամանակների լիբերալ ընթերցողը նրան կարդում եր իր ձեռվ, իսկ մենք, վորպես մարքսիստներ-լենինյաններ, նրան կարդում ենք մեռվ: Մեր ըմբռնումն այլ կլինի: Յերբ ըմբռնումն այլ կլինի: Յերբ զեկուցում ես

անում Զերնիչեսկու աշխատանքի մասին, յերբ վերլուծում ես Զերնիչեսկուն, յերբ ծավալում են վիճարանությունները և մաքերի փոխադարձ հզկումը, այն ժամանակ ավելի լավ կյուրացնես մարքսիզմ-լենինիզմը: Վիճարանությունների ժամանակ պետք է խոսել իր բառերով, եթե լեզվով: Դուք պետք ե ունենաք ձեր լեզուն, յես այդ գիտեմ: Հարկավոր ե, վոր մարդիկ վիճարաննեն, սակայն վոչ թե արհետականորեն, այլ ըստ եյտիյան, այսինքն այնպես, վոր գործը հասնի յեթե վոչ «տուրուղմիոցի», ապա զեթ լուրջ, տաք բանակովի: Ահա թե ինչպես պետք ե գնել հարցը: Այն ժամանակ մարդիկ հաճախեն խմբակները և կղրազվեն: Մարքսիզմ-լենինիզմի դիտությունն ամենից բավի ձեռք և բերվում ուսումնասիրման հենց այս մեթոդի միջոցով:

Յես կարծում եմ, վոր տեքստը դուք ինձանից ավելի լավ զիտեք, յես համոզված եմ դրանում: Յեթե յես սկսեյի ձեզ հետ միասին քննություն տալ, ապա յես կտապալվելի տեքստի գծով, անապայման կտապալվեյի: Իսկ մարքսիստարեն մոտենալ հարցին, յես կարծում եմ, անշուշտ ավելի ճիշտ կկարողանամ, քան դուք, ավելի շուտ կդանեմ մոտեցումի դիմքը, վորովհետեւ յերկարան փորձը, պրակտիկան, հարստացված թեորիական վեճերով,—այս բոլորը սրել են իմ զգացումները: Յես զդում եմ կեղծությունը, յերբ պիտալ ձեւակերպումն ե տրվում: Այդպիտալ ինձ մոտ յերեան է յեկել նոր զգացում, վորը մշակվել ե թեորիական վեճերում և բանակոխներում, վորն ինձ ընտելացըել և ուշազիր լինելու: Ուստի քննարկումից չպետք ե վախենալ, այլ պետք ե մարդկանց ընտելացնել դրան: Միայն այդ յեղանակով կհզկվեն ձեր միտքն ու ձեր լեզուն: Յերբ դուք խմանաք, վոր ամեն մի սխալ յեղակացության վերաբերյալ և ամեն մի սխալ ձեւակերպության վերաբերյալ ձեր դիմքը վիճարաններու յեն, դուք կսկսեք ավելի, ուշադիր կերպով դմոտել ավելի ճիշտ լուծումներ:

Ուստի, յեթե դուք ուղում եք հատկանալ մարքսիզմ-լենինիզմը և տիբապետել այդ թեորիային, ապա ուրեմն ինքնուրույն պարապմունքների վրա հիմնված զեկուցումները,

ու Փերատները և վիճաբանությունները հսկայական ողուտ
կտան ձեզ: Ինքնուրույն ուսումնասիրումը մարդուզմ-լենի-
նիզմին ախրապետելու հիմնական մեթոդն է:

Ա. ՈՒՍՈՒՑՉԻ ԳՅԱՆԱԿՈՐ ԽՆԴԻՐՆ Ե ՆՈՐ ՄԱՐԴՈՒ-
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԴԱՍ-
ՏԻՄՈՒՅՆՈՒՄ

Գուցե յերեկ այսոնեղ առվել է, իսկ այսոր ահա վոչ
վոք շասաց, թե ի՞նչպես են ձեզ մաս յերեխաները, ի՞նչպես
ե զնում աշխատանքը նրանց հետ, ի՞նչպես են հարաբերու-
թյունները յերեխաների հետ: Այսոնեղ մի ընկեր հարևան-
ցիորեն ասաց, «Ասհմանված և հերթապահություն բան-
վորական հանրակացարաններում: Հերթապահները հետեւում
են, վորագեղի յերեխաների վարքը չառ չխանդարի կար-
գը»: Այս՝ այդպես ե (Տեղից.—Այս'):

Մի՞թե գուք ուզում եք, վոր յերեխան լինի միջակ
որիվատել, 45 տարեկան մարդ՝ քիչ խանդարված ստամոք-
սով: (Ծիծաղ): Կամ թե ուզում եք, վոր յերեխան լինի ձեր
—չափահաս մարդկանց—ճիշտ նմանությունը: Զե՞ վոր յե-
րեխանները խիստ չառ նախաձեռնություն ունեն: Յեթե յես
ուսուցիչ լինելի և յեթե յերեխանները վորեւ տեղ թեկուզ
չարածձիւթյուն անելին, սակայն այնպես, վոր այդ ժա-
մանակ քաջություն յերեար, աստ յես այդ քաջությունը
մի տեսակ կիրախուսելի, իսկ բուն չարածձիւթյան, հա-
մար մի քիչ կնախատելի նրանց և դրանով կտահմանափակ-
վելի: Անշուշտ, պետք ե տարբերել՝ չարածձիւթյուն ել
կա, չարածձիւթյուն ել:

Յեթե ինձ հարց տային, թե ամենազլիսավորն ի՞նչ ե
պահանջվում ներկա մոմենտում ուսուցչից, ապա յես կտ-
ելի—ածեցնել նոր մարդուն: (Մենք այդ հաճախ ենք
ստում, և դրանով յես վոչինչ նոր բան չեմ ասում): Մեզ
մոտ ստեղծվում է սոցիալիստական հասարակության նոր
մարդը: Այդ նոր մարդուն պետք է պատվաստել մարդկա-
յին ամենալավ համարվություններ: Զե՞ վոր նոր, սոցիալիս-
տական մարդը ես, նա չի լինի այնպիսի մարդ, վորի մոտ
բացակայում են մարդկային գգացմունքները: Մարդը մարդ
է: Մրանից պետք ե յենել:

Իսկ մարդկային ի՞նչպիսի զգացմունքներ պետք ե
պատվաստել: Ամենից առաջ, սեր, սեր դեպի իր ժողո-
վուրդը, սեր դեպի աշխատավոր մասամերքը: Մարդ պետք
է սիրի մարդկանց: Յեթե նա սիրի մարդկանց, ապա ուրի-
մըն նա ավելի լավ կապրի, ավելի ուրախ կլինի նրա կյան-
քը, վորովհետեւ վոչ վոք այնպես վատ չի ապրում աշխար-
հում, ինչպես միզանտրոպը—մարդատյացը: Նա ինքը բոլո-
րից վատ ե ապրում:

Յերկրորդ,—ազնիվություն: Յերեխաններին սովորեցնել
ազնիվություն: Ուսուցիչը այս բանին պետք է, ըստիս, հաս-
նի հետեւղականորեն՝ մանկավարժական բոլոր յեղանակնե-
րով, ինչպիսիք միայն հնարապոր են: Չատել, չխարել, այլ
իրեն ազնիվ պահել:

Յերրորդ,—քաջություն: Սոցիալիստական մարդը—աշ-
խատանքի մարդը—նա ուզում է նվաճել աշխարհը, և վոչ
միայն յերկրադնողի վրա գոյություն ունեցող աշխարհը,
այլև տիեզերքը տեղից չարժել մարդու բանականության
միջոցով:

Չորրորդ,—ընկերական գողում: Հարկավոր է, վոր ըն-
կերական զողում լինի: Դա հարկավոր է թեկուզ այն պատ-
ճառով, վոր մենք գտնվում ենք կապիտալիստական շրջա-
պատում, վորովհետեւ մեր Միությունը սիստեմատիկ կեր-
պով հալածանքի յե յենթարբիվում և յուրաքանչյուր բուր-
ժուա անձկանոք սպասում և հարմար մոմենտի, վորպեսզե
զգմի նորհրդային Միությունը: Իհարկե, նրանք չեն տեսնե
այլպիսի մոմենտ, սակայն այս նշանակում է, վոր նորհր-
դային Միությունը միայն պողպատե պարապով կարող է
պաշտպանվել: ԽՍՀՄ-ն ել ավելի ուժեղ կլինի, յեթե խոր-
հրդային մարդկանց մեջ ընկերական զողում գաստիարակ-
վի՝ վոքը հասակից, —իսկական, ամուր ընկերական զո-
ղում՝ զպրոցական հասակից: Այս ժամանակ, յեթե մարդ
գա կարմիր Բանակը կամ ընկենի ուղղմանակատ, նրա հա-
մար ավելի հեշտ կլինի մարտական զողման մեջ մտնել:
Նա կպա արդեն սիրով զողված՝ դեպի սոցիալիստական
հայրենիքը:

Հինգերրորդ—պետք է սիրել աշխատանքը, վոչ միայն
սիրել, այլև ազնիվորեն վերաբերվել դեպի աշխատանքը,

բնդսմին հաստատապես հիշելով, վոր յեթէ մարդ ապրում, սնկում է և չի աշխատում, ապա այդ նշանակում է, վոր նա ուրիշի աշխատանին է ուսում: Առանձին կարիք չկա այդ ձեր առջեւ զարդացնելու: Այդ՝ աշակերտների առջեւ պետք է զարդացնել: Աշխատանքի մասին պետք է առանձնապես հարց բարձրացնել: Մենք հաճախ ասում ենք. «Աշխատանքը պատվի զործ է»: Առաջնորդը առաջ է մղել «աշխատանքը պատվի զործ է» լուրանգը, և յեթե զորք միայն կրկնեք, վոր «աշխատանքը պատվի զործ է», ապա այդ քիչ կլինի: Այդ չեւ առաջնորդի կամքի, կուսակցության և ժողովրդի կամքի կատարումը: Հարկավոր է, վորպեսզի յերեխաները կոնկրետ տեսնեն, վոր իրոք աշխատանքը պատվի զործ է: Յերեխային չես կարող խարել: Յեթե մի փոքր կեզծություն լինի, ապա նա արդեն չի հավատա:

Կարելի յեւ շարունակել նոր մարդու հատկությունների թվարկումը, բայց յես կամահմանախալվեմ միայն սրանցով: Այդ—մարքսիստ-լենինյանի հատկություններն են: Սակայն նույնպիսիք են պահանջները նաև յուրաքանչյուր առնիվ վողջամիտ մարդու նկատմամբ: Մեր թեորիայի արժեքը հենց նրանումն է, վոր նա պահանջում է այն, ինչ վոր պահանջում է ապնիվ, վողջամիտ մարդու համար:

Կարգապահությունը՝ այլ ինքնըստինքյան բղիսում եայն հատկություններից, վորոնց մասին յես ասացի վերկում: Յերեխանները սիրում են կոտրատել, ծոմուել: Մենք ինքներս ել այլպես ենք յեղել: Ուրիշի պարտեզ սողոսկելը բավականություն եր. գողացած խնճորն ավելի քաղցր եր թվում, քան իր սեփականը, կամ դնածը: Բայց համենայն գեղս պետք է ասել, վոր մարդիկ պահեն, պահպանեն արժեքները: Պետք է վոչ միայն կոտրել, այլև ստեղծել—այդ ե եյականը: Մենք վոչ միայն քանդում ենք հինը, մենք նորը կառուցողներ ենք հանդիսանում:

Յես կարծում եմ, վոր իրոք ուսուցիչ լինելու համար մարդ պետք է ուսուցիչ ծնմի, այլ վոչ թե միայն դառնա ուսուցիչ: Ուսուցչի աշխատանքում շատ դժվարություններ կան և մեծ և ուսուցչի պատասխանատվությունը: Անշուշ, համապատասխան դիսցիլինայի դասավանդումը—դա հիմնական աշխատանքն է, բայց բոլորից բացի, ուսուցչին ըս-

դորինակում են աշակերտները: Ահա թե ինչո՞ւ ուսուցչի աշխարհայցքը, նրա վարքը, նրա կյանքը, նրա մոտեցումը յուրաքանչյուր յերեւութիւն—այսպես կամ այնպես աղդում են բոլոր աշակերտների վրա: Յեվ այդ հաճախ անկատելի կերպով:

Սակայն այդ քիչ է: Կարելի յեւ համարձակ ասել, վոր յեթի ուսուցիչը շատ հեղինակավոր է, ապա վորոց մարդկանց վրա ամբողջ կյանքում մնում են այդ ուսուցչի աղդեցության հետքերը: Ահա թե ինչու նաև կարեոր է, վոր ուսուցիչը հետեւի իրեն, վոր նա զգա, թե իր վարքը, իր գործողություններն ամենառավել վերահսկողության տակ են գտնվում, վորպիսի վերահսկողության տակ չի գտնվում աշխարհում վոչ մի մարդ: Տասնյակ մանկական աչքեր նայում են նրան և մարդու հոգեկան կյանքի զանազան նյուանների նկատմամբ վոչինչ ավելի ուշադիր, ավելի սրատես, ավելի զգայունակ բան չկա, վոչ վոք այնպես չի փորսա բոլոր նրբությունները, ինչպես մանկական աչքը: Այս պետք է հիշել:

Միայն յես վախենում եմ ձեզ այն մտքին չբերեմ, թե գուք պետք է անբնական պահեք ձեզ: Այդ նույնպես լավ չե, այդ միանդամայն սխալ կլիներ: Ուսուցչին անհրաժեշտ ե բնականություն և աղնվություն բոլոր հարցերի լուծման ասպարեզում, պատիճների հարցում և այլն: Յենթագրենք տղան կոտրեց ապակին կամ վիրավորեց աղջկան, կամ աղջիկը—տղային: Այստեղ պետք է յելնել վոչ թե միայն բուն վաստից, վորպես այդպիսինից, այլ պետք է հաշվի առնել, թե ինչպես կազդի մանկական հոգեբանության վրա այդ հարցի այս կամ այն լուծումը: Այդ հարկավոր ե անպայման: Համենայն գեղս յերեխաններն ունեն իրենց «իրավաբանական կողեքոր»: Յենթագրենք, վոր յերեխանքը կովեցին, մեկի քիթը կոտրեցին, իսկ հետո այդ ուսուժածը զնաց և վատաբանեց: Մինչեւ իսկ չեղոք յերեխան ել նրան զրա համար կը ատապարտի և կասի. «Ե՞յ գու մատնիչ—կովել ես ուզում, իսկ հետո ել գնում ես դանգատում»:

Գլխավորն ե—լինել ազնիվ՝ յերեխանների հետ, հետևել

իրեն, մեր յերեխաներից դաստիարակել իրոք լավ, իրոք սոցիալիստական բաղադրյաներ—ազնիվ, քաջ, զարգացած ընկերական զգացմունք ունեցող, մանկական հոգեբանության և մանկական հնարավորությունների սահմաններում կարգապահության վարժված սոցիալիստական բաղադրյաներ:

Յեզ վերջապես, ընկերներ, հարկավոր ե, վոր յերեխաների մոտ յերկար տարիների ընթացքում մնան վառտպավորություններ, բավարպույն տպավորություններ և հիշողություններ դպրոցի մասին։ Յեթե զուք հասնեք այն բանին, վոր ձեր աշակերտներն իրենց ամբողջ կյանքում պահպանեն հիշողություններ ուսման տարիների մասին, վորպես հիանալի տարիների, —այդ արդեն լավ նշան ե։

Ահա, ըստիս, այն զիմավորը, վոր պահանջվում է ուսուցչից։

III. ԻՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵջ ԱՆԵԼ, ՀԱՍՏՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԱՄԵՆ ՈՐ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՄԵՆ ՄԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե

Այժմ կանգ առնեմ հասարակական կյանքի հարցերի վրա։ Այսուղ կարեսը ե, վոր ուսուցիչը սերտ մոտենամարդկանց, իրականությանը, սովորի հասկանալ նաև տեղական իրադրությունը։ Անշուշտ, իդեալական կլիներ, յեթե մեր բոլոր ուսուցիչները և ինտելիգենցիայի մեր մյուս կազմերը լիովին տիրապետելին մարքություն-լենինիզմին։ Սակայն վատ չե լինի, յեթե նրանք իմանան նույնիսկ թեկուղ այդ թեորիայի ընդհանուր հիմունքները։ Այդ արդեն վատ չե թե՛ կորունիստի, թե՛ անկուսակցականի համար։ Յես յերաշխավորում եմ, վոր վորոշ անկուսակցականներ մարքություն-լենինիզմը ավելի լավ զիտեն, քան կուսակցականներ։ Ճիշտ ե, նրանց թիվը փոքր ե։ Այսուղ հարկավոր ե սովորել՝ մարքուստորեն մոտենալ տեղական կյանքի յերկույթներին, ճիշտ վերլուծել դրանք։ Մինչդեռ այն զեկուցումներում, վոր զուք անում եք բնակչության առջև ու վորոնց մասին զուք այսուղ պատմեցիք, բոլորովին բացակայում ե տեղական կյանքը։ Ահա վորքան մարդ ել այս-

աեղ հանդես յեկավ, վո՞չ մեկը չասաց, թե ինքն առիթ եռնեցել զեկուցումով հանդես դալու տեղական յերեւյթի մասին։ Զե՞ վոր մարդիկ ծնվում, մեռնում են, ամուսնունում, հարսանիք են կատարում։ Բազմաթիվ հասարակական յերեւյթներ կան... Մի՞թե այդ մասին վոչինչ չկա առելու կամ չի կարելի առել։ Մի՞թե առիթներ քիչ կան։

Կոլտնտեսային շինարարություն, տնտեսության զարդացում—այս ամենը զարթեցնում ե կոլտնտեսականի միտքը, կապում ե դա հասարակական լայն խնդիրների հետ։ Զեկուցումների համար միանդամայն հետաքրքրական նյութ՝ վորքան ուզեկ։

Կոլտնտեսությունները զատում են աչքի ընկնող դորձիներին, և այդպիսի մարդկանց մասին զեկուցումները, ե այն ել յեղբակացություններով հանդերձ, նրանց զրականու բացասական կողմերի ցուցագրումով հանդերձ, անտարակույս, տաք վիճաբանություններ առաջ կրերեն։ Այդպիսի զեկուցումներն առողջ քննարկման յենթարկելու դեպքում աճում ե կոլտնտեսականի հասարակական դեմքը, մեծանում ե հարգանքը կոլտնտեսային աշխատանքի վերաբերմաբ։

Հարեւան կոլտնտեսության մեջ բերքը յեղել է 10—12—15 ցենտներ՝ յուրաքանչյուր հեկտարից, իսկ ձեր կոլտնտեսության մեջ—5—6 ցենտներ։ Ինչո՞ւ ձեզ մոտ թույլ բերք է յեղել։ Ահա ձեզ ե թեմա զեկուցման համար։

Մի խոսքով, յերբ զուք մտնում եք դյուզացիական կյանքի մեջ, յերբ ուզում եք աշխատել բնակչության հետ, ապա համենայն գեղս այնպես արեք, վոր դա անմիջական սերտ շփումն ունենա կյանքի հետ, վոր զիտչի, վոր զեկուցումը չոչափի մարդկանց։ Այն ժամանակ, անպայման, ժողովուրդը կղնա ձեր զեկուցումները լսելու։ Ինքնին հասկանալի յե, վոր մեր յերկրի և ամբողջ աշխարհի կյանքում տեղի ունեցող հասարակական և քաղաքական դեպքերը միշտ չափեց ավելի նյութ են տալիս։

Վերջապես, հարկավոր ե, վոր զեկուցումներն ականքնարկվեն և վոր մարդիկ ավելի հանդուրժողաբար վերաբերվեն յելույթների ձեին։ Գլխավորն այն ե, վոր հասկացվի զեկուցման հիմնական միտքը և վոր սրա մասին վիճա-

քանություններին մասնակցողներն իրենց կարծիքն արտա-
հայտեն, չճնշվելով շարադրանքի ձևից, լավ հեշելով, վոր
խոսքի ձևը ձեռքբերովի բան է: Կարեռ ե, վոր միտքն
իրենը լինի:

Ուսուցչի հասարակական կյանքում անհրաժեշտ է, վոր
ամենուրեք, վորտեղ նա կարող է, վորտեղ նրա կարծիքը
հարցնում են, վոր նա իր ձայնը տա ազնվորեն: Հարկավոր
է, վոր դյուղացիները հարստանք ունենան դեպի ուսուցիչը,
վոր միայն վորպես ուսուցչի, այլ և վորպես մարդու: Նկա-
տի ունեցեք, վոր սա քաղաքական հարց է: Սա—խորապես
քաղաքական հարց է: Յեթե ուզում եք, վոր ուսուցչու-
թյունն իրեն համապատասխան դիրք գրավի, ապա ուրեմն
այնպիսի դիմ տարեք, վոր ուսուցիչը լինի անկողմնակալ,
չվախենա իր տեսակետն արտահայտել այս կամ այն հարցի
վերաբերյալ: Գյուղացիական հարցերը լուծելիս, իհարկե,
ուսուցիչը կարող է ոգնել, վորչափով նա ավյալ վայրի քա-
ղաքացին ե, վորչափով նա մասնակցում է ավյալ վայրի
տնտեսական և քաղաքական կյանքին:

Իսկ գլխավորապես ուսուցիչը կարող է գյուղացուն
ողնել կուլտուրական ասպարեզում:

Կուլտուրայի համացողությունը շատ լայն ե—սկսած
յերես ըլվանալուց մինչեւ մարդկային մտքի բարձունքները:
Յեվ, յերեսակայեցեք, այստեղ ավելի հետ ե, քան վորկե
այլ տեղ, սայթաքել-ընկնել որիվատելության մեջ: Զեռքե-
րի մաքրությունը, հագուստի մաքրությունը, բնակարանի
անհրաժեշտ կոմֆորտը և այլն—այս ամենը բնակչության
կուլտուրականության նշաններ են: Հասարակական ժողով-
ները, գրամատիկական խմբակները, պարի յերեկոները և
այլն—հասարակական կուլտուրայի նշաններ են: Կոմունիստ-
ները դրանց մասնակցում են, իրավացիորեն համարելով
դրանք վորպես կուլտուրական զարգացման գործոններ:
Սակայն այդ բոլորը կարող ե վերածվել նաև որիվատելա-
կան ժամանցի: Յեվ ահա, որիվատելության ու իսկական
կուլտուրական զարգացման միջև անջրպես տեսնելու հա-
մար պահանջվում է զգալի կուլտուրականություն և քաղա-
քական զգացողություն: Մարքսիստն այդ նվաճումների
վրա նայում է, վորպես առաջ շարժվելու միջոցի, նոր աս-

տիճանի: Իսկ քաղենու համար դա ինքնանպատակ է, նա
ձգուում է իր նվաճումը կայունացնելու, նա դառնուում է
ավյալ իրադրության ստրուկը, ամրապնդելով նաև համա-
պատասխան բարոյախոսություն, քննեցնելով միտքը: Դրա
դեմ պետք է պայջամարել:

Ուստի ցանկալի յե, վոր դուք կուլտուրական աշխա-
տանք կատարելիս նրա մեջ հասարական-պետական տար-
րեր մտցնեք, քաղաքականություն մտցնեք, այլապես ձեր
կուլտուրան կողմնորոշումը կկորցնի և կընդունի այսպես
կոչված «դավառական կուլտուրայի» բնույթ, կկորցնի կա-
պը համապետական կուլտուրայի հետ, համապետական
կուլտուրական պահանջմունքների հետ:

Կուլտուրական այն գործը, վոր դուք վարում եք,
պետք է կազել ընդհանուր-սոցիալիստական շինարարու-
թյան հետ, վորպեսզի մարդ մեկուսացած չմտածի: Որի-
վատելը կցկուուր, մեկուսի մտածող մարդ է, վոր իրեն չի
կապում վոչ մի բանի հետ և վոչ վորի հետ:

Այս աշխատանքը շատ գժվար է: Այս շատ գժվար և
նրբին աշխատանք է այն տեսակետից, վոր մարդ ինքը պետք
է կուլտուրական լինի: Այստեղ միննույն բանն է, ինչպես
յերաժշտության մեջ: Յերաժիշտը կեղծ նոտան կեռնի որ-
կեսարում, իսկ ինձ համար մի ամբողջ կեղծ գամմա ան-
նկատելի կլինի, վորովհետեւ յես յերաժշտությունից չեմ
հասկանում: Յերբ կեղծ նոտան յես զգում, հարկավոր և
ուղղել այն:

IV. ԱԽՍՈՒՑԻՉՆ ԻՐ ԽՈՍՔԻ ՄԵՋ ԿԵՆԴԱՆԻ ՀՈԳԻ
ՅԵՎ ՄԻՏՔ ՊԵՏՔ Ե ԴԵՒ

Ընկերներ, յես չգիտեմ՝ ինչպես անցավ յերեկ ձեր
նիստը: Բայց ահա այսոր չի նկատվում ձեղ մոտ մատերի
փոխանակություն—բոլորը միայն հաշիվ են տալիս իրենց
աշխատանքի մասին, վոմանք գեղազարդում են այն: Մի՛-
թե նրա համար եք դուք այստեղ հավաքվել, վոր յուրա-
քանչյուրդ ավելի կամ պակաս սովորական հաշվետպու-
թյուն տաք: Իսկ հատկապես այնպես և ստացվում, վոր մի
պարոցը նման է մյուսին և մարդիկ նույնպես նման են մեկը

մյուսին։ Իսկ յես կարծում եյթ, վոր դուք այստեղ հավաք-
վել եք «կովելու» համար։

Ինչո՞ւ համար դուք, յերբ պատմում եք, ձգտում եք
պատրաստի Փորմուլաներով ասել։ Զե՞ վոր դուք ուսուցիչ-
ներ եք, դուք սուսերեն լեզուն գիտեք։ Իսկ դիտե՞ք, թե ինչ
է նշանակում պատրաստի Փրազներով խոսել։ Այդ նշանա-
կում ե, վոր ձեր միտքը չի աշխատում, այլ միայն լեզուն և
աշխատում։ Պատրաստի Փրազով դուք մարդկանց վրա
տպավորություն չեք գործի։ Տպավորություն չեք գործի
այն պատճառով, վոր պատրաստի Փրազն առանց ձեզ ել
գիտեն։ Դուք վախենում եք, վոր յեթե ձեր ձեռվ ասեք,
այդ այնքան գեղեցիկ չի լինի։ Սիսալվում եք։ Ավելի լավ
կլսեն այն, ավելի հասկանալի կլինի այն։

Եեղ մոտ իրական կյանքում—մեծ կապ կա գյուղացիու-
թյան հետ, բնակչության հետ։ Բայց յերբ պատմում եք
այդ կրանքի մասին, ապա այդ կապը կարծես ինչ-վոր
«տեխնիկական» կապի տպավորություն և թողնում.—այս-
քան ժողովներ գումարեցինք, այսքան զրոյցներ անցկաց-
րինք։ Կարծես թե դուք կյանքի մասին չեք խոսում, այլ
գյուղացիության և ուսուցչության միջև տեղի ունեցող հա-
րաբերությունների «տեխնիկայի» մասին եք խոսում։ Զե՞
վոր դուք մարդկանց հետ հանգիպում եք վոչ միայն ժողով-
ներում և զրոյցների ժամանակ։ Հարկավոր և խոսել բնակ-
չության հետ ունեցած ձեր հարաբերությունների բովան-
դակության մասին։

Այդ հարաբերություններն ունեն և՛ քաղաքական, և՛
չողերանական և՛ այլ կողմեր, վորոնք յերեան են դաշտա-
մարդկամբն նորմալ կյանքում։ Բայց ձեր շարադրանքի մեջ
չկա այդ սերտ, որդանական կապը։ Գուցե յես շատ եմ
ծերացել ու այդ պատճառով չեմ կարողմնում վորսալ այն։
Բայց յես վոչ մի ծպտուն չլսեցի, թե վորոնք են ձեզանում
դժվարությունները, վորտեղ և ինչն ե ձեզ սեղմում։ Դուք
պատրաստի Փրազներ եք կրկնում միայն։ Դա Փորմալ և
դարձնում խոսքը։ Յուրաքանչյուր վոք պետք ե ձգտի խոսել
իր լեզվով, այն լեզվով, վոր մայրն ե տվել բնան։ Ամենա-
լավ լեզուն մայրական լեզուն ե, հավատացե՞ք իմ խղճին։
Մենք ասում ենք.—ուսուցիչ, ուսուցիչ, մեծ դործ ե

ուսուցիչ լինելը։ Յեվ այդ ճիշտ ե։ Սակայն ի՞նչ գուրս կդա,
յեթե ուսուցիչն սկսի միայն պատրաստի Փորմուլաներ
հրամցնել մարդկանց։

Ահավասիկ դուք, խոսած ընկերներից վերջինը, աշխա-
տում եք գյուղում, կարծես թե գոհ եք ձեր գրությունից,
դուք բանն այնպես նկարագրեցիք, վոր շատ լավ եք ապ-
դում այժմ։ Բայց ահա, ինձ թվում ե, յեթե կարդան ձեր
ձառների սղագրությունները, ապա մարդիկ քիչ կհավատան
նրան, ինչ վոր դուք ասել եք։ Յեվ վո՛չ այն պատճառով,
վոր այդ ճիշտ չե, վո՛չ այդ պատճառով։ Առաջին, կասեն,
վոր ընկերը մի քիչ իրեն գովում է։ Յերես'ւմ ե. յես այս-
վոր ընկերը մի քիչ իրեն գովում է։ Յենց վոր մարդիկ զգան,
ինչ ու այս-ինչ բանն եմ արել։ Հենց վոր մարդիկ զգան,
վոր վորեւ մեկն իրեն քիչ գովաբանում ե առաջ քաշում, իս-
կույն ուշադրությունները լարում են։ Յես ձեզ ուղղակի
կույն ուշադրությունները լարում են։ Յես ձեզ կույն
կասեն.—զուք գեղեցիկ խոսքեր շատ ասացիք, իսկ հոգի
չզգացվեց։ Եեր խոսքերի մեջ հոգի չզգացվեց։ Սրանով յես
ամենենին չեմ ուզում ասել, թե դուք հոգի չունեք։ Ամենե-
շին վոչ։ Յես միայն ուզում եմ ասել ահա թե ինչ.—այն
ներքին վիճակը, վոր ձեզանում գոյություն ունի, գուք ձբգ-
տում եք արտահայտել զնայուն Փորմուլաներով։ Իսկ ներ-
քին զգացմունքները կենդանի մարդ զեղում ե սովորաբար
իր, հասարակ լեզվով, առանց պատրաստի ձեսկերպումնե-
րի գիմելու։ Ուստի, յերբ գրագետ մարդը կարգա ձեր աղա-
գրությունը, ապա նա կմտածի—արհեստականություն կա։
Սրհեստականություն։ Զկարգայիշ։ Ասացե՞ք, ստո՞ւմ եմ յես, թե
վոչ։ Այսո ձեզ մոտ արհեստական ե դուրս դալիս։ (Տե-
ղից—Ճիշտ ե)։

Ահա յերեակայեցե՞ք, վոր այդպիսի շարադրանքով,
այդպիսի զեկուցումով ժողովրդի առջև դուրս գաք և խո-
սել։ Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կստացվի։ Զեղ կլսեն ու
կլսնան, մինչև իսկ առանց հարց տալու, իսկ յեթե հարց ել
տան, ապա՝ քիչ։

Աւստի, առաջինը, վոր պահանջվում է ուսուցչից, դա
սեփական, մորից ստացած՝ խոսքի վոճն և։ Սովորիր քե-
րականությունը, վորպեսզի խոսակցությունդ ուղիղ լինի,
բայց խոսիր բնական, սովորական լիզվով։

Յես պետք է ասեմ, վոր ուսուցչական աշխատանքը
ամենադժվար աշխատանքներից մեկն է։ Ինձ մինչև իսկ
թվում ե, վոր հարկավոր է ուսուցիչ ծնվել։ Յես խոսում
եմ բառիս իսկական իմաստով՝ ուսուցչի մասին։ Վամանք
չառ գիտեն։ Յես գիտեմ բազմաթիվ մարդեկ, վորոնք
հիանալի կերպով տիրապետում են առարկային, սակայն
յեթե այդպիսի մարդուն ուսուցիչ նշանակեք, նա չի կա-
րողանա իր առարկան լավ շարադրել։ Պետք է վոչ միայն
իմանալ առարկան, այլև պետք է կարողանալ դա այնպես
շարադրել, վոր ունկնդիրները լավ յուրացնեն։

Այդպես ուրեմն, յես ել հենց կարծում եմ, վոր ամե-
նից առաջ հարկավոր ե, վոր լեզուն նորմալ լինի։ Յերեխա-
ներին մի՛ սովորեցրեք տրափարեսի, պատրաստի Փորմու-
լաների, —այդ նրանց մի ականջից մտնում, մյուսից դուրս
է պալիս։

Յեթե դու խոսում ես, ապա ուրեմն խոսիր քոնը։ Բա-
ռերն ուրիշ կլինեն, իսկ եյությունը՝ միենույնը։ Յել ահա-
կտեսնես, մարդեկ ել մի քիչ ավելի ուշադրությամբ ականջ
կդնեն։ Հարկավոր ե, վոր խոսքը տեղին ու ժամանակին-
ավի, վորպեսզի ինքն իրեն բղխի։ Իսկ այստեղ այնպես է
ստացվում, վոր մարդ մեխանիկորեն է խոսում։ Հարկա-
վոր ե, վոր վոչ թե մեխանիկորեն, այլ որդանական կեր-
պով բառերը տեղան, վոր գրանք քո միտքն արտահայտեն։

Պետք է խուսափել պատրաստի ձեւակերպումներով խո-
սելուց, յերբ մարդ հիշողությամբ է վերցնում և վոչ թե
ուղեղի միջոցով մշակում։ Այն լեզուն, վորով դուք բնակ-
չության հետ խոսում եք, դարձեք պարզ-հասարակ լիզու,
ձեր լեզուն, գործածելով բնական վոճ։ Յեթե վոճն անբնա-
կան է, ապա ստացվում է վանող տպավորություն։ Ձեզանից
շատերը հավանորեն հիշում են (զուցե և վոչ) հին տիրա-
ցուհներին, վորոնք ըրջում եյին վանքերը։ Նրանց թիվը
մեծ էր մեր յերկրությունությունից առաջ։ Յեթե նրան-
ցից մեկին լում եյիր, ապա յերկրորդը ճիշտ նույնն եր-

բլրացնում։ —«Տե՛ր, աստվածամայրն արժանացուց տեսա-
նել զուրբ յերեսս յուր»։ Զի կարելի նրանց նմաննվել։ Մեր
լեզուն հարուստ է, և դուք մի՛ կոտրատեք այն, մի՛ վշա-
ցրեք և յերեխաններին սովորեցրեք դրան։ Յերեխաններին
բօնչպես սովորեցնել դրան։ Պահանջեցե՛ք, վոր նրանք նախ-
մտածեն, հետո խոսեն, և վոչ թե խոսեն, հետո մտածեն։
Այս է հիմնականը։

Ահավասիկ այն ինդիրները, վոր ծառացած են մեր
ուսուցչության առջև։ Իսկ ամբողջությամբ վերցրած մեր
ուսուցչությունը պետք է ե՛լ ավելի կուլտուրական լինի։
Կուլտուրական վոչ միայն այն տեսակետից, վոր ուսուցիչ-
ներն իմանան իրենց առարկան, այլ բառիս ընդհանուր
իմաստով կուլտուրական, վոր ուսուցչության բուն իսկ պա-
հանջմունքները լայն լինեն։ Դուք ինքներդ տեսնում եք, վոր
և՛ քաղաքային և՛ գյուղական բնակչությունը, վորի կուլ-
տուրական աճումն առաջ է գնում վիթխարի քայլերով,
կուլտուրական մեծ պահանջներ է ներկայացնում։

Մեր կյանքը շարունակ բարդանում է, նա պահանջում
է ավելի ու ավելի բարձր «առաստաղ» մեր բոլոր աշխա-
տողներից՝ բոլոր ասպարեզներում։ Յեթե այժմ ուսուցչի
«առաստաղը», որինակ, յերկու մետր է, ապա ուրեմն հար-
կավոր է, վոր դա լինի յերկուս ու կես մետր։

Ընկերներն այստեղ խոսեցին լրագրերի պակասության
մասին։ Անշուշտ, լրագրերի կարիք կա։ Բայց այնուամե-
նայինիվ, յեթե ուզում եք, ապա ձեր կուլտուրայի աճման
համար լրագրը քիչ է։ Լրագրը հարկավոր է քաղաքական
կողմնորոշման համար տվյալ մոմենտում, ընթացիկ կարիք-
ների համար։ Իսկ կուլտուրան բարձրացնելու համար պետք
է դիմել կուլտուրայի պատմությանը, մարդկության ամ-
բողջ կուլտուրական ժառանգությունը։ Հարկավոր է իմա-
նալ ուսուական գրականությունը։ Առանց գրան յոլա դնալ չի
լինի։ Ուսուցիչը գործ ունի մարդկային նյութի հետ, ամե-
նայերիտասարդ և ամենազդայունակ նյութի հետ։ Գեղար-

Հեռական գրականությունը—դա մարդկանց տիպերի ամենահարստա պանորաման է, զոնե յես այդպես եմ կարծում։ Գեղարվեստական գրականության մեջ դուք տեսնում եք մարդկային տիպեր անվերջ այլական գրություններում։ Ուստի՝ գեղարվեստական գրականությունն իմանալը համարյա ձեր պրոֆեսիոնալ պարտականությունն է։ Ուստի կուլտուրան բարձրացնելը առաջին հերթին գեղարվեստական գրականությունն իմանալն է։ Նա ամենից ավելի յէ հարստացնում մարդուն, հնարավորություն և տալիս (յես դատում եմ իմ փորձից) մարդուն՝ աճելու, ավելի հասկանալու մարդկանց։

Ահա այն ամենը, ինչ վոր յես ուզում եյի ձեզ ասել։ Եսուել կարելի յէ անվերջ, ցավոտ հարցեր ձեղանում շատ ունեք։ Ամենագլխավորը, ամենահիմնականը, վոր յես ուզում եյի ասել, դուք լսեցիք։ Յես կուզեյի, վոր տուն զերադանալուց հետո դուք չմոռանաք իմ ցանկությունները։ (Բուռն ծափահարություններ)։

ՃԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ՇԲԱՆՇԱՆԱԿԻՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆԸ
ՆՎԻՌՎԱԾ ՅԵՐԵԿՈՒՅԹԻՆ
1939 Թ. ՀՈԽԼԻՄԻ 8-ԻՆ

Հնկերներ, ամեն մեկի համար հասկանալի յէ, վոր ժողովրդական ուսուցիչներին չքանչաններով և մեղալներով պարզեատրելը քաղաքական մեծ նշանակություն ունի։ Կառավարությունը, ամբողջ խորհրդային ժողովուրդն այս պարզեատրումով խիստ բարձրացնում են ժողովրդական ուսուցչին։

Բնականաբար հարց ե ծագում, այդ ինչո՞ւ համար և հարկավոր, վոր ժողովրդական ուսուցիչը բարձր կանգնած վիճ։

Բանվոր գասակարգը և գյուղացիությունը, այլապես առած, ամբողջ ժողովուրդը, վորոնք իրենց ձեռքն են վերցրել իշխանությունը, ուզում են պահել այդ իշխանությունը, ուզում են նոր կյանք, այսինքն կոմունիզմ կառուցել, ուզում են, վոր աշխարհի բոլոր ժողովուրդներն այդ տեսակետից որինակ վերցնեն Խորհրդային Միությունից։ Իշխանությունը վերջնականապես ամրացնելու և կոմունիզմ կառուցելու համար հարկավոր ե, վոր ժողովուրդն ունենաւ սեփական ինտելիգենցիա, հարկավոր ե, վոր ժողովուրդը կրթված գաունա, հարկավոր ե, վոր վերանա հակադրությունը և ամեն տեսակ տարբերություն ինտելեկտուալ ու Փիզիկական աշխատանքի միջև։ Իսկ յե՞րբ ինտելեկտուալ աշխատանքը չի տարբերվի Փիզիկականից։ Միայն այն ժամանակ, յերբ մեր բոլոր մարդիկ, յերբ ամբողջ ժողովուրդը կրթված կլինի, յերբ մենք կոմունիզմ կառուցենք։

Հսկայական, բազմազգ Խորհրդային Միության ամբողջ ժողովուրդը կրթված գարձնել—սա մեծագույն խողիրներից յեկն ե։ Բայց վո՞չ միայն կրթված։ Մենք ուզում ենք նաև, վոր մեր ժողովուրդը խորհրդային, կոմունիստական գա-

տիարակություն ստանա: Մենք ուզում ենք, վոր մեր դպրություն կոմունիստական դաստիարակություն տա: իսկ այդ ի՞նչ են կոմունիստական դաստիարակություն մի նշանակում: Ահա այդ մասին ել Հենց յես ուզում եմ մի քանի խոսք ասել:

Դուք հիանալի գիտեք, վոր վո՛չ միայն տարրական դպրոցում, այլև միջնակարգ դպրոցում ել մարզսիզմը խորը մուսումնասիրվում: Սակայն յերբ մենք խոսում ենք կոմունիստական դաստիարակության մասին, մենք նկատի ունենք վոչ թե մարքսիզմի դոկտրինայի ուսումնասիրումը, այլ հատկապես դաստիարակությունը: Հոկայակա՞ն տարրերություն կա սովորեցնելու և դաստիարակելու միջև: Թվաբանական տարրերը 1-ին դասարանի աշակերտներին յե՛ս ել կարող եմ սովորեցնել (աղմկալի հավանություն, ծափակարություններ), իսկ դաստիարակելը—սա՝ ինչ խոսք, վոր շատ ավելի բարդ գործ է: Իդուր չեր, վոր առաջ ասում եյին. ընտանիքը դաստիարակում ե մարդուն, միջավայրը դաստիարակում ե մարդուն, դպրոցն իր ղրոշմն ե զնում մարդու վրա: Դաստիարակումը այդ ամենադժվար խնդիրներից մեկն ե, յես խոսում եմ իսկական, ճիշտ դաստիարակման մասին:

Ի՞նչ ե նշանակում դաստիարակել: Այդ նշանակում և ազգել աշակերտի հոգեկան ու բարոյական կերպարանքի վրա, ազգել վորո՛չ ուզդությամբ՝ նրա ամբողջ տասնամյա դաստիարակել այդ նշանակում ե իրեն այնպես պահելաշանթիվ քանակությամբ թյուրիմացություններին և ընդհանակություն լուծում տալու պարագայում աշակերտների մոտ այն համոզմունքը կազմվի, վոր ուսուցիչը ճիշտ ե վարվել: իսկ սա խոր դրոշմ ե զնում մանկական հոգու վրա: Յեթէ իսկ սա խոր դրոշմ ե զնում մանկական հոգու վրա: Յեթէ ուսուցիչն աշառու թվանշան ե դրել թույլ աշակերտին— յես համոզված եմ, վոր այդ աշառու թվանշանը չի մնա առանց դրոշմ դնելու աշակերտների հոգեբանության վրա: Հենց բանն ել այն ե, վոր ուսուցիչը գտնվում ե ասես թե յուրահատուկ հայելիների լարյուրինթոսում, նրան նայում յուրահատուկ հայելիների վրայուրինթոսում, նրան նայում յուրահատուկ հայելիների վրա:

Վորոնք գարմանալի լավ կարողանում են նկատել ուսուցչի թե՛ գրական և թե՛ բացասական կողմերը: Աշակերտներին դաստիարակելը ամենից առաջ ուսուցչի վարքագիծն ե դաստիարակում, այդ՝ ուսուցչի վերաբերմունքն ե դեպի աշակերտները: Յեվ սա դաստիարակությունը դարձնում ե խիստ գժվար գործ:

Սրանով յես ամենեին չեմ ուզում խուսափած լինել՝ յերեխաներին լավ սովորեցնելու անհրաժեշտությունից: Զեղ, վորպես ուսուցիչների, այդ ինքնըստինքյան համկանալի յե: Բայց տես վոր դաստիարակչական աշխատանքը շատ հաճախ ուսուցիչների ուշադրությունից վրիպում ե, բայց հենց այդ աշխատանքն ե, վոր հոկայական նշանակություն ունի յերեխաների բնավորության և բարոյական կերպարանքի ձևավորման համար: Ծատ ուսուցիչներ մոռանում են, վոր իրենք մանկավարժ պետք ե լինեն, իսկ մանկավարժը մարդկային հոգիների խնժեներն ե: Անշուշտ, աշակերտների վրա հարկավոր ուղղությամբ աղդելու համար պետք ե համապատասխան տաղանդ ունենալ: Սակայն այդ գեռնս բոլորը չե: Գիտակցորեն վրոշակի ազգեցություն գործել կարողանալու համար հարկավոր ե, վոր ուսուցիչներինը շատ կուլտուրական լինի ե—յես ուղղակի կասեմարձր կրթության տեր մարդ լինի:

Իսկապես: Գետությունը, ժողովուրդը ուսուցիչներին են վստահում յերեխաներին, այսինքն այն տարիքի մարդկանց, յերբ ամենից հեշտ ե նրանց վրա ազգեցություն գործելը, նրանց են վստահում յերիտասարդ սերնդի մնուցանումը, զարդացումը, ձևավորումը, այսինքն պետության, ժողովրդի հույսն ու ապագան: Սա հոկայական վրատահություն ե, վոր մեծ պատասխանատվություն ե զնում ուսուցչի վրա: Պարզ ե, վոր ուսուցիչները պետք ե լինեն մի կողմից՝ բարձր կրթության տեր, իսկ մյուս կողմից՝ բայուրեղանման ազնիվ: Վորովհետեւ ազնվությունը, յես կասելի, բնավորության անկաշառությունը, բառիս բարձր իմաստով, դա վոչ միայն հմայում ե յերեխաներին, դա վարակում ե նրանց, դա խոր դրոշմ ե թողնում նրանց ամրող հետադա կյանքի վրա:

Ուրեմն, ընկերնե՛ր, մենք ուզում ենք, վոր մեր յերեւաները կոմունիստական վոգով դաստիարակվեն, վոր նրանց մեջ կոմունիստական սկզբունքներ պատվաստվեն: Դուք կարող եք հարց տալ իսկ ի՞նչ բան են կոմունիստական սկզբունքները:

Կոմունիստական սկզբունքները, յեթե այն վերցնելու լինենք հասարակ ձևով, —դա բարձր կրթության տեր, աղնվի, առաջավոր մարդու սկզբունքներն են, դա սերն և դեպի սոցիալիստական հայրենիքը, բարեկամությունն ե, ընկերությունը, մարդասիրությունը, ազնվությունը, սերն և գեղսի սոցիալիստական աշխատանքը և մի ամրող շարք այլ հատկությունների, վորոնք հայտնի յեն ամեն մեկին: Այդ հատկությունների, այդ բարձր վորակների դաստիարակումը, աճեցումն ել հետց հանդիսանում ե կոմունիստական դաստիարակության կարեռադույն բաղկացուցիչ մասը: ◊

Այդ հատկությունները չեն կարելի մանկան մեջ արմատավորել գեղեցիկ քարոզների կամ սոսկ աղիտացիոն աղավակների ողնությամբ: Այդ հատկությունները կարող են մանկան գիտակցության մեջ արմատավորվել ամենորյա անկատելի ներգործության կարգով միայն, վորը հիմնված պետք ե լինի ընկերական շփման վրա՝ դպրոցական կյանքի ամրող ժամանակաշրջանում: Յել, հասկանալի յե, այդ հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ ուսուցիչներն իրենք, թեկուղ ընդհանուր դժեռով, կտիրապետեն մարքսիզմ-լենինիզմին:

Մենք հաճախ ասում ենք. անհրաժեշտ ե տիրապետել մարքսիզմ-լենինիզմին: Պետք ե ձեղ ասեմ, —յես այդ սեփական փորձից դիտեմ, —վոր մարքսիզմ-լենինիզմի ուսումնամիբումը բացառիկ կերպով շատ բան ե տալիս մարդուն՝ նրա անմիջական աշխատանքում, ողնում ե գտնելու այն բաղմաթիվ հարցերի ճիշտ լուծումը, վորոնք ծագում են ամեն մեկի աշխատանքում: Մեր ուսուցչության առջև ծառացած ե խորհրդային մարդու կոմունիստական դաստիարակման, նրա կոմունիստական գիտակցության ձևավորման դժվարագույն խնդիրը: Այս խնդիրը կարելի յե հաջողությամբ լուծել միայն այն պայմանով, վոր մեր ուսուցիչնե-

րը լինեն վոչ միայն բարձր կրթության տեր, այլև մարքսիստը են կրթված մարդիկ:

Այդ տեսակետից գուշ նույն դրության մեջ եք գըտնվում, ինչպես յես, ինչպես այս սեղանի շուրջը նստած ընկերները: Յես կարծում եմ, դուք բոլորդ կհամաձայնեք ինձ հետ, վոր մեր ժողովուրդը զարգանում ե բացառիկ կերպով արագ, չտեսնված արագ ե աճում նրա գիտակցականությունը, կրթվածությունը, կուլտուրականությունը, և այդ տեղի յե ունենում մեր յերկրի բոլոր անկյուններում: Այժմ մեզանում չկան «արջի» անկյուններ, այժմ մեր յերկրի յուրաքանչյուր անկյունն տածածում ե՝ ինքը Մոսկվայի մասնիկն ե: (Հավանություն արտահայտող աղմկալի բացականարկություններ):

Իսկ այս ի՞նչ ե նշանակում—ժողովրդի աճումը: Ամենից առաջ այս նշանակում ե, վոր ամեն տարի մեր միջավայրն ե լցվում մոտ յերկու միլիոն կրթված մարդ: Յեվ մենք, ծերունիներս, վոր ժամանակակից դպրոց չենք անցել, աստիճանաբար հետ կմղենք, յեթե համառնք ու չգդվենք նրանց հետեւց: Ուստի և այն ուսուցիչները, վորոնք տուած անցել են գպրոցը, չպետք ե բերանքաց մտիկ տան: Գիտելիքներ հավաքել անպայման հարկավոր ե: Ուսուցիչը վոչ միայն ուսուցիչ ե, այլև աշակերտ ե: (Ծափահարություններ):

Ուսուցիչն իր յեռանդը, արյունը, ամենը, ինչ վոր արժեքավոր ե նրա մոտ, տալիս ե իր աշակերտներին, ժողովը ըլլին: Սակայն, ընկերնե՛ր, յեթե այսոր, վաղը, վաղը չե մյուս որը դուք ամենը տաք, ինչ վոր դուք ունեք, և ընդունին նորից ու նորից չըրացնեք ձեր դիտելիքները, ուժերը, յեռանդը, այդպիսով չե՞ վոր ձեղ մոտ վոչինչ չի մնա: (Հավանության բացականչություններ): Ուսուցիչը մի կողմից տալիս ե, մյուս կողմից վարպես սպունգ, իր մեջ ներծծելով, վերցնում ե ժողովրդից, կյանքից, գիտությունից ամեն լավ բան և այդ լավը նորից տալիս յերեխաններին: (Բացականչություններ): Յեվ յեթե խորհրդային ուսուցիչն ուղում ե լինել խսկան, տուածավոր ուսուցիչ և' այսոր և' վաղը, տպա

նա միշտ պետք ե ընթանա ժողովրդի ամենաառաջավոր մասէ հետ: Այդ գեղալքում, վորքան ել թեկուզ նա շատ տա իր աշակերտներին, բայց յեթե նա սնվում է ժողովրդից, նրանից վերցնում է ամենալավ գծերը, հատկությունները, ապա այդ սնուցիչ հյութերից նա միշտ առառությամբ կունենա յիշեխաների համար:

Այսոր այստեղ հավաքվել են ուսուցիչներ Խորհրդային Միության բոլոր ծայրերից: Յես շատ ուրախ եմ, վոր այստեղ ներկա յեն և՛ ուկրաինացիներ, և՛ վրացիներ, և՛ ակտոնում հանրապետությունների ուսուցիչներ: Յես շատ էուզենայի, վորպեսզի դուք Մոսկվայից վերցնեյիք այն ամենը, ինչ վոր կարելի յե վերցնել, վորպեսզի ձեր պարգևատրումը, ձեզ շքանշան հանձնելը, Մոսկվայում ձեզ ցույց տրված ընդունելությունը, —վորպեսզի այդ բոլորը ձեր մեջ տպափորվեր ամբողջ կյանքում և տպավորվեր ամենավառ գծերով: (Բուռն ծախահարություններ): Յես կուզեյի, վորպեսզի այս բոլորը դուք ընդունեյիք ինչպես սերտ շփում, ինչպես անխախտելի կապ Մոսկվայի հետ, իսկ ավելի պարզ ասած, խորհրդային կառավարության հետ, կուսակցության հետ, ընկեր Ստալինի հետ, և վորպեսզի կառավարության հետ, կուսակցության հետ, ընկեր Ստալինի հետ ունեցած կապի այդ զգացմունքն ընդմիշտ մնա ձեր ամենայա աշխատանքում: (Ներկա յեկողները զերմ ովացիա յեն սարքում կուսակցության, կառավարության պատվին, ընկեր Ստալինի պատվին):

ԱՐՎԵՍՏԻ ՍՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐՔՍԻՉՄ- ԼԵՆԻՆԻՒԹՅՄԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընկերներ, այստեղ պետք ե հավաքվեյին, ինչպես ինձ տսացին, թատրոնի աշխատողները—արտիստները, սակայն տուղթորիան դուրս յեկավ ավելի լայն. այստեղ են արվեստի բոլոր աշխատողները: Այնուամենայնիվ յես կակած թատրոնից:

Դա գրականությանն ամենամուտ արվեստն է: Մեծ ու տաղանդավոր գրողների լավագույն յերկերը հաճախ միաձուլում են թատրոնի հետ: Հիշեցեք, որինակ, Շեքսպիրին, Գյոթեյին, Պուշկինին, Գրիբոյեդովին, Ոստրովսկուն և մյուս գրողներին: Թատերական արվեստը և գրականությունը խիստ շատ ընդհանուր բան ունեն: Դատ գեղքերում թատրոնը վո՞չ միայն լրացնում ե գրական յերկը, այլև ավելի վառ արտահայտություն ե տալիս նրա իդեաներին, գրանք դարձնելով ավելի մատչելի, մասսաներին ավելի հասանելի, վորք նույնիսկ նպաստում ե տվյալ յերկն ավելի լավ հասկանալուն:

Ռուսական գեղարվեստական գրականությունը շատ բան և արել համամարդկային մտքի գարգացման համար, և նրանում պատվավոր են գրավում: Պուշկին, Տոլստոյ, Գորկի—արանք հսկայական արվեստագետներ են, աշխարհի մեծ գրողներ են, և միաժամանակ սրանք իրոք ուուս գրողներ են, վորոնք արտացոլել են իրենց գարագրանը և ուուս ժողովրդի գծերը:

Ռուսական գրականության և նրա նշանակության աճան հետ զուգընթաց աճել ե ուուսական թատրոնը և նրա գերը մեր ժողովրդի զարգացման գործում: Պուշկինի, Գրիբոյեդովի, Գորկովի, Ոստրովսկու յերկերն արգեն հաստատուն կերպով վուգի կանգնեցրին մեր թատրոնը չնորհիվ այնքան փայլուն քննադատների, ինչպես՝ բելինսկին և Դոբրոլյուգովը, վորոնք լարգած ուշադրությամբ հետևում եյին

թատրոնի զարդացմանը, ղերասանների գեղարվեստական ստեղծագործությանը։ Հիշեցե՛ք, թէ վորքա՛ն բարձր եր գնահատում Բելինսկին Մոչալովի խաղը, վորքա՛ն փայլուն եջեր և նա նվիրել նրա գեղարվեստական ստեղծագործությանը։

Ընդհանրապես մեր թատերական աշխատողները պահանջայի տրադիցիաներ ունեն։ Մատնացույց կանեմ սոսկ հողությամբ՝ այն անունները, վորոնք ալպավորվել են ԽՍՀՄ կուլտուրական մարդկանց գլխում, որինակ՝ Նովիկովը, վերոհիշյալ Մոչալովը, Շչետիկինը, Մարիա Գավրիլովնա Սավինան, Սադովսկինների ընտանիքը և այլն։ Արդեն սոսկ միայն այն փաստը, վոր կուլտուրական մարդիկ ամբողջ մի դար հիշում են այդ անունները, ամենից լավ վկայում է թատրոնի կարեորության և արժեքավորության մասին՝ ժողովրդի կուլտուրական կյանքում։

Ուղերայի և բալետի թատրոններն ավելի հեռու եյին ժողովրդից—Մարինսկի թատրոնը—Պետերբուրգում և Մեծ թատրոնը Մուսկվայում՝ յենթարկված եյին ցարական պալատի խնամակալությանը։ Նշանակում է, վորպես ժողովրդի համար կուլտուրական-յերաժշտական ոչախներ, դրանք բացառված եյին։ Մասնավոր, պրովինցիալ ոսկերան թույլ եր, իսկ նրա տեղերը՝ թանգ։ Թւստի և բառիս լիտերար իմաստով ժողովրդական արտիստներ ոսկերայի ու բալետի թատրոններում չկային։

Բայց այնուամենայնիվ, չնայած վերից կատարվող ընշումին և նախաձեռնողական սովելիության մասնավոր թատրոններում, յերաժշտական արվեստը մեզանում ունի ժիշտարք փայլուն կոմպոզիտորներ և յերաժիշտներ։ Վերցրե՛ք, որինակ, Գլինկային, Դարդումիսկիուն, Բալակիրեվին, Բորովիկին, Ռիմսկի-Կորսակովին և, առանձնապես, Մուսորգսկուն, վորի մասին հայտնի ուստ գեղարվեստակետ և քննադատ Ստասովն ասել ե՝ նա «պատկանում է այն մարդկանց թվին, վորոնց համար հետնորդները հուշարձաններ են կանգնեցնում»։

Ռուսական կերպարվեստն իր հերթին համառորեն ու հաստատապես զարգանում եր ցարական ինքնակալության և բուրժուական-կալվածատիրական ճնշման գրվանի տակ։

Մատնացույց կանեմ այնպիսի անուններ, ինչպես՝ Վենեցիանովը, Ֆեղոտովը, Կրամսկայան և, առանձնապես, Պերովը և Ռեպինը։ Սրանք յերևելի վարպետներ են, վորոնցով իրավացիորեն պարձենում ե ուստ ժողովուրդը։

Դուք ուղիներ եք փնտում, թէ ինչպես ավելի լավ ծառայեք ժողովրդին։ Յեվ ճիշտ եք վարվում, յերբ այդ ուղիները վորոնելիս դիմում եք մարգսիզմ-լենինիզմի ուսումնասիրումը չի աղատում, այլ ընդհակառակը—պարտավորեցնում ե լավ իմանալ իր պրոֆեսիոնալ գործը, պարտավորեցնում ե լինել բարձր վոճի վարպետ։

Նայեցե՛ք, թէ անցյալում ի՞նչպես եր ժողովրդին ծառալում ուստական զեղարվեստական միտքը, գրականությունը, թատրոնը, նկարչությունը և այլն—բոլոր, այսպես կոչված, «ալպատիկ» և «յերաժշտական» արվեստները։ Ի՞նչն եր այն ժամանակ արվեստի ուժը։ Դա այն եր, վոր խոչոր արվեստագետներն իրենց տաղանդը, իրենց վարպետությունն ուղղում եյին այն բանին, վոր ըստ իրենց համացողության արտահայտեն ժողովրդի ակնկալությունները։ Յեվ նրանք այդ բանում նշանակելի հաջողաւթյունների եյին համառում, վորովհետեւ իր ժամանակ նրանք ուստական հաւաքալության առաջավոր մարդիկն եյին։

Ահա, որինակ, Տուրգենևիը—խոշորագույն գրողներից մեկը։ Գոյություն ունի տարածված մի կարծիք, վոր օտքեղարվեստական ձեւի առաջնակարգ վարպետ ե։ Սակայն, յեթե մենք դիմենք նրա յերկերի վերլուծմանը, ապա կտեսնենք նրանց մեջ նաև սոցիալական բովանդակություն։ Վերցրե՛ք «Յանկա օխոտնիկ»-ն այստեղ պայծառ, իրոք գեղարվեստական ձեւի մեջ, ասեն նկարչության մեջ, բնության գրկում պատկերված են պարզ ու հասարակ մարդկանց, առավելապես գյուղացիների կենդանի կերպարները։

Ի՞նչը կարող է ավելի անվնասակար, ավելի ապոլիտիկ լինել, քան տուրգենևվան այդ պերսոնաժները։ Սակայն և այնպիս այն ժամանակվա լավագույն քննադատները, վորոնց համար թշվառների պաշտպանությունը վճռողական չափանիշն եր գրական յերկի գնահատման գործում, հիաց-

մունքով ընդունեցին «Записки охотника»-ն, նրա մեջ գլուխ էլեկտրոնային համոզմունքներին՝ համապատասխանող բովանդակություն:

«Записки охотника»-յում ներկայացված են ճորտերը և արդկային այն բոլոր ապրումներով հանդերձ, վորոնք համապատասխան նաև, այսպես կոչված, «կուլտուրական» մարդկանց: Ճորտ գյուղացու մեջ Տուրքենեվը ցույց է տվել այն ժարդուն, վորը նույնպես, ինչպես և բոլոր մարդեկան, արժանի յէ մարդկային իրավունքներ ունենալուն: Ճիշտ ե, այդ իրավունքների մասին հեղինակը չի խոսել, բայց դրանք ինքնին ծագում եյին, դրանք գրդառում-հրահրում եյին ընթերցողի միտքը, վորը, անշուշտ, այն ժամանակվա պայտաններում քաղաքական ներգործություն եր ունենում: — առաջ եր բերում ճորտության կողմնակիցների զայրութը, իրախուսում ու ամրապնդում եր պրոդրեսիվ ուժերին: Առաջի զարմանալի չե, վոր Տուրքենեվի՝ համարյա յուրաքանչյուր նոր լույս տեսնող գիրքը առաջ եր բերում սուրապայքար, տարբեր գնահատություն պայքարող դրական խմբակների կողմից: Բավական ե հիշեցնել նրա «Отцы и дети» վեպը:

Այս ամենը վկայում է այն մասին, վոր Տուրքենեվի ստեղծագործությունն ունեն վո՛չ միայն գեղարվեստական, այլև հասարակական-քաղաքական նշանակություն, վորը և, ինչպես յետ կարծում եմ, նրա յերկերին տալիս եր իրոք գեղարվեստական փայլ: Յեթե հասարակական-քաղաքական ժողովանդակությունը հանենք Տուրքենեվի՝ յերկերի միջից, ապա սրանք այնքան պատվավոր տեղ չեյին դրավի ուսուական գրականության պատմության մեջ:

Կարելի յե վստահ կերպով առել, վոր Տուրքենեվը ուսուական հասարակության մեջ վորոնում եր պրոդրեսիվ յերեւութներ և ձգտում եր դրանք գեղարվեստականորեն պատկերել: Այդ տեսակետից նա շատ բան ե արել ուսուական հասարակական մաքի զարգացման համար, թեե նա ինչպես յեր կանգնած այն խոկական մարտիկներից, վորը Հեռու յեր կանգնած այն խոկական մարտիկներից, վորոնք պայքարում եյին ինքնակալության դեմ, ստրկատիրության դեմ, նիկոլայ Լի ուժիմի դեմ, վորին իղությունը:

Վոր ժողովուրու նիկոլայ Պալկին մականունն եր ավել, նաև Ալեքսանդր Ա-ի ուժիմի դեմ:

Տուրգենևը հետո յեր կանգնած Գերցենից, Զերնիկեվ-սկուց և Դոբրոլյուրովից: Բավարովի տիպի մարդեկան նրա համակրանքը չեյին վայելում: Բայց գեղարվեստական ճշշմարտականությունը գրավում եր Տուրգենևին դեպի գոյություն ունեցող իրականության ուսալ տիպերի վերաստեղծումը: Նրա գեղարվեստական տաղանդն ամենից ավելի ցայտուն և լիակատար կերպով արտահայտվել կարող եր ցայտուն և լիակատար կերպով արտահայտվել կարող միայն:

Այս խոչըրագույն գրովներից մեկը ևս—Զեխովը: Հայտնի յե, վոր սա ուսուաց լեզվի աննման վարպետն ե: Նա ասես առատությունից, միանդամայն ինքնարվերաբար ցույց եր տալիս՝ առորյա կյանքում ամեն քայլափոխում իրեն հանդիսած կերպարները (տիպերը): Յեվ ո՞վ կարող ե նրա վրա կասկածել քաղաքական միտումնավորության մեջ:

Բայց Զեխովը չեր տեսնում ժողովրդի կանգում դրական կողմեր և ուրախ տեսարաններ: Նա նկատում եր ուստի ական մեջքանության և չինովնիկության ամրող սպանիչ պատկերը՝ նրանց զանդաղաշարժությամբ, բթամտությամբ ու քարասրությամբ հանդերձ: Նա զեղարվեստականորեն և դիպուկ կերպով պատկերում եր քաղաքական հնչումը, գյուղացիների կողոպատումը կալվածատերերի ու կուլակների կողմից, գյուղացիության անելանելիությունը ցարիզմի և կասկածալիքմի պայմաններում: Զնայած բառերի մեջ բացառիկ ժամանականը, չնայած իր հերոսների վերաբերմաբ զգացմունքների արտաքին արտահայտումների բացակայությանը, նա այնպես ե նվաճում ընթերցողին, այնպես ե ներգործում նրա վրա, վոր վերջինս ինքն ե անչըրաժեշտ յեղակացությունն անում:

Պետք ե յենթագրել, վոր Զեխովի գեղարվեստական ըմբունումը նրան հարկադրում եր մտածել գոյություն ունեցող մարդկանց ազատելու միջոցների մասին ես: Բայց բուրժուական աշխարհայցքի գերին մնալով, նա չեր տեսնում հին աշխարհի դեմ պայքարելու խոկական ուղիները: Այդ տեսակետից բնորոշ ե 1892 թ. նոյեմբերի 25-ի

նրա նամակը՝ ուղղված Սուվորինին: «Հիշեցե՛ք, —գրում եր
Զեխովը, —վոր գրողները, վորոնց մենք անվանում ենք հա-
վերժական, կամ պարզապես լավ գրողներ, և վորոնք մեզ
հարեցնում են, ունեն մի ընդհանուր և խիստ կարևոր
հատկանիւ. —նրանք մի ինչ-վոր տեղ են գնում, և Զեղ կան-
չում են այսուեղ և Դուք զգում եք վո՛չ թե մտքով, այլ,
ձեր ամբողջ եյտթյամբ, վոր նրանք մի ինչ-վոր նպատակ
ունեն, ինչպես Համլետի հոր ուրիշականը, վորն իզուր չեր,
վոր գալիս և խոռում եր յերկակայությունը: Վոմանց
մոտ, նայած կալիրին, նպատակները մերձավոր են—ճոր-
տատիրական իրավունք, հայրենիքի աղատադրում, քաղա-
քականություն, գեղեցկություն, կամ պարզապես ողի, ինչ-
պես Դենիս Դավիդովի մոտ, մյուսների մոտ նպատակները
հեռավոր են—աստված, հանդերձյալ կյանք, մարդկության
յերթանկություն և այլն: Նրանցից լավագույնները ունալ են
և նկարագրում են կյանքն այսպես, ինչպես նա կա, սակայն
այն պատճառով, վոր յուրաքանչյուր տողը տողոված և
նպատակի գիտակցությամբ, ինչպես հյութով, Դուք բացի
այն կյանքից, ինչպիսին կա, զգում եք նաև այն կյանքը,
վորը պետք ե լինի, և այդ գերում է Զեղ: Իսկ մե՞նք:
Մե՛նք: Մենք նկարագրում ենք կյանքն այսպես, ինչպես
նա կա, իսկ այնուհետեւ—վո՛չ դես, վո՛չ դեն... Այնուհետեւ
թեկուղ մտրակներով մեղ ձաղկեք: Մենք չունենք վո՛չ մեր-
ձավոր, վո՛չ հեռավոր նպատակներ և մեր հոգին դափ-դա-
տարկ ե»:

Ինչպես տեսնում եք, վիթխարի գեղարվեստադեմն իր
ստեղծագործական սահմանափակության հիմնական պատ-
ճառը համարում եր «մերձավոր» ու «հեռավոր» նպատակ-
ների բացակայությունը: Իսկ «կյանքի նկարագրության»
հսկական նպատակը նրա ժամանակ միայն սոցիալիզմը կա-
րող եր լինել: Յեկ վորովհետեւ այդ նպատակը նրա համար
անմատչելի յեր, ապա նա բավականանում եր գոյություն
ունեցող հասարակության քննադատությամբ, վորով, ասես,
Հող եր պատրաստում պրոլետարական գրողների համար:

Մաքսիմ Գորկին առաջինն եր, վոր «Մայրը» վեպում
տվեց բանվոր դասակարգի միջից յելած հեղափոխականների

գեղարվեստական կերպարներ և գրանով իսկ սկիզբ գրեց
պրոլետարական գեղարվեստական գրականության, վորը
զիտե իր «մերձավոր» ու «հեռավոր» նպատակները և վորը
նրանց միջից ե քաղում իր ուժերը:

Ընկերներ, յես ձեզ հիշեցրի Տուրգենեվի ու Զեխովի
մասին միմիայն այն պատճառով, վոր, ըստ վաղուց իվեր
տարածված կարծիքի, նրանք տենդենցիային չեյին զոհաբե-
րում իրենց յերկերի գեղարվեստական ձեզ: «Ճշգրիտ և
ուժեղ կերպով վերաբարդել ճշմարտությունը, կյանքի
ուելությունը, —առում եր Տուրգենեվը, —մեծագույն յեր-
ջանկություն և զրականագետի համար, մինչև իսկ, յեթե
այդ ճշմարտությունը չի համապատասխանում նրա սեփա-
կան համակրանքներին»: Յեկ ահա իսկական գեղարվեստա-
գետի վերաբարդած ուեալ կյանքը ինքն եր տենդենցիա
ստեղծում և հասարակության մեջ բորբոքում քաղաքական
կրքերը:

Մեր գեղարվեստական գրականությունն անցյալում լե-
ցուն և յեղեւ սոցիալական խոր բովանդակությամբ: Յեկ
այդ հանդամանքը մեր գրականությունը գարձնում եր ժո-
ղովրդական: Նա համբաւակում եր, զարգացնում եր, մարդ-
կանց մղում եր գեղի հեղափոխական գործողություններ: Այդ
գրականությունը ցույց եր տալիս գոյություն ունեցող
բուրգուական-կալվածատիրական աշխարհի բացասական
կողմերը և զրադշում եր այն հարցով, թե ինչպես բարելա-
վել ճնշված մարդկանց, տառապյաների, չքավորների
կյանքը:

Այդ տեսակետից մեր գրականությունն ունի, թերեւս,
սպեցիֆիկ ուստական հատկություններ: Անշուշտ, զա ուներ
իր հատուկ պատճառները, բայց մենք այժմ նրանց մասին
չենք խոսում, միայն ընդգծում ենք այդ հատկությունները,
վոր նկատել ե դեռ Ենդելսը: Իր նամակներից մեկում նա
նշել ե. «Ժամանակակից ուսւ և նորվեգացի գրողները,
վորոնք հայալի վեպեր են գրում, բոլորն ել առանց բա-
ցառության տենդենցիոն են»:

Լիակատար հիմունքով, նույնը կարելի յե ասել մեր
յերաժշտության, նկարչության և այլնի մասին: Թույլ

տվել՝ ք վերստին հիշեցնել ձեզ Մուսորգսկու մասին, վորին յես արդեն հիշատակեցի վորպես որինակ: Նա ստեղծել է բազմաթիվ կոմպոզիցիաներ, վորոնց թիմաները վերցրել են գյուղացիական կյանքից—«Калистрат», «Спи, усни, крестьянский сын», «Колыбельная Еремушки», аռանձին տեսարաններ «Хованщина»—յում, «Борис Годунов»—ում և ուրիշ: Այդ կոմպոզիցիաներում ուղղակի վերակենդանանում են ճորտ դյուղացիների անմխթար կյանքի ծանր պատկերները:

